

101

ՀԱՍԻՆ ՊԵՋԸ-ԱՎԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՋԸ-ԱՎԻԱԿԱՆ ԽԱՂՈՒՄԻ ԽԱՂԱՂ ՍԵՆԱ-
ՏԱՆԻՔԻ ՈՒ ՊԵՋԸ-ԱՎԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

№ 8

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԴԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՏՅԱԼԻՑ

355(47.925)

F-24

ԴԻՎԻԱԿԱՆ ԽԱՂՈՒՄԻ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ

1930

**ՀԱՄԻՉ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ**

ԿՈՊ.

1. Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ. — «Սովորիկ ազգական
գործը» 25
2. ԼԻՏՈՎՅԵԼ. — «Տեխնիկան պատերազմում» . . . 13
3. ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ բջիջներին կից ոդա-ֆիմիա-
կան պաշտպանության խմբակներ (ծրագիր
և կազմակերպչական մեքենայական խնդիր-
ներ) 10
4. Բանաձևեր ՀՍԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ Հայաս-
տանյան 2-րդ համագումարի 5
5. ՌՈԶԱՆՈՎ. — «Ինչ և ինչպե՞ս պետք է անել
մոգեխիստների խմբակներում» 10
6. Վ. ՅԵՅՏԼԵՐ. — «Աղավնիները ազգական
ծառայության մեջ» 10
7. Ս. ԲԵԼՈՎ. — «Ինչպե՞ս սովորել հրացանով
նիշտ կրակել» 10
8. Վ. ՅԱԶԻԿՈՎ. — «Շունը ազգական ծառա-
յության մեջ» 15

1 MAR 2010

Բ - 24

ԸՄՓԽՀ ՅԵՂ ՀՄԽՀ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ ԱՇԽԱ-
ՑԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՆՆԱՐԱՆՆ Ե

№ 8

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԴԻՎԻԶԻԱՅԻ ԱՆՑՅԱԼԻՑ



24174-59

«ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇԵՐԵՎԱՆ

1930

ՀԱՅԳԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
Պատվեր № 183
Գրադրույթ/կադր 2764 (բ)
Տիրում 5000

Դաշնակների 3 տարվա փաստական տիրապետութ-
թյան ընթացքում Հայաստանում ազդամիջյան պառակ-
տումը հասավ ծայրահեղ լարվածության: Մուսավա-
թիստական Ազրբեջանում և մենչեվիկական Վրաստա-
նում կորցրած լինելով իր տնտեսական դիրքերը և
փակված լինելով Յերևանի աղքատիկ նահանգում,
հայկական բուրժուազիան նորանոր չուկաներ ձեռք բե-
րելու համար, հանուն «ծովից-ծով» «մեծ Հայաստա-
նի» դիմում էր արյունալի ավանտյուրաների: Այդ
նպատակի համար նա զոհարեցում էր հայ ժողովրդի՝
իմպերիալիստական պատերազմից հետո վերջին վողջ
մնացած մասսաների գոյությունը:

Միևնույն ժամանակ հրահրված լինելով նաև իմ-
պերիալիստների կողմից, դաշնակները կարճ ժամա-
նակամիջոցում մի քանի անգամ պատերազմ ունեցան
Ազրբեջանի, 2 անգամ Տաճկաստանի և մի անգամ
Վրաստանի դեմ, ավերակներով ու դիակներով ծած-
կելով դաշնակ Հայաստանի սահմանները: Յերկրի
ներսում դաշնակցական կառավարությունը վարում էր
այնպիսի մի քաղաքականություն, վորի նպատակն էր
ամենադաժան կերպով ֆիզիկապես վոջնեցնել աղ-
քային փոքրամասնություններին և առավին հերթին՝
թուրքերին: Տասնյակ հազար թուրք խաղաղ դյուղա-
ցիներ սրի ու հրի մատնվեցին Աղբարայում, Ջանդի-
բասարում, Բեյուք-Վեդիյում, Շարուրում, Դարալա-
դյաղում: Նրանց դյուղերը հողին հավասարվեցին,
խակ ունեցած-չունեցածը թալանվեց դաշնակցական
խմբապետների կողմից:

Պատերազմական իր այդ ավանդույտներին համար դաշնակցական Հայաստանի աշխատանքի յերկիրը զորանոցները յեր վերածվել: Զենքի տակ եր կանչվել ու պահվում մշտական 40 հազար զինվոր: Կանոնավոր բանակին կից դաշնակները պահում էին նաև մի անկանոն բանակ՝ «խմբեր»—Գրոյի, Համադասարի, Սեպուհի, Մարտիրոսի, Յապոնի և այլն: Այդ խմբերն իրենցից ներկայացնում էին դաշնակ կառավարության հենարանը: Այդ խմբերը կազմակերպված էին անկարգապահ, ընչաքաղց, ապադասակարգային տարրերից: Այդ բանդաները կատարյալ պատիժ էին աշխատավոր դյուղացիության ու բանվորների գլխին, նամանավանդ թուրք դյուղացիության գլխին: Խմբապետների ու մատուցերիստների այդ բանդաներն էին յերկրի լիակատար տերն ու տիրականը:

Իսկ ի՞նչ եր ներկայացնում էրենց յերկիր ընդհանուր դրությունը: Յերկրում տիրում եր սովը, բնակչության մի մասը Փիղիքապես բնաջնջված եր, տասնյակ հազարավոր մարդիկ մեռնում էին հազար ու մի հիվանդություններից, համաճարակներից: Արդյունաբերության մասին խոսք անդամ լինել չեր կարող դաշնակ Հայաստանում: Գյուղատնտեսությունը հասել եր չտեսնված ծանր վիճակի: Իսկ միևնույն ժամանակ դաշնակ կառավարությունը աշխատավոր դյուղացիությանից ու բանվորներից դուրս քաջեց մոտ 15 միլիոն վոսկի ռուբլու եմիսիոն հարկ:

Բացի դրանից դաշնակ կառավարությունը ստանում ե անգլո-ամերիկյան կապիտալիստներից մոտ 17 միլիոն 4 հարյուր հազար դոլլարի փոխառություն, ռազմամթերքով (40 հազար «Ռոսսե» սիստեմի հրացան և 400 հատ «Վիկկերս» սիստեմի զնդացի, վորից վրաց

մեռչեիկները, վորպես մաքսային հարկ վերցնում են 27 տոկոսը, վորպեսզի թույլ տան Վրաստանի վրայով փոխադրել այդ ռազմամթերքը): Այդ բոլոր փողերն ու ապուռադինումը համարյա ամբողջովին ծախսվում ե խմբապետների բանդաների վրա: Մի կողմից խմբապետները պահանջում էին հայ ժողովրդից զինվել, իբր թե ինքնապաշտպանության նպատակներով, բայց մյուս կողմից նրանք դատարկում էին ռազմական պահեստներն ու դորանոցները և ռազմամթերքը վաճառում անխտիր թե՛ հայ և թե՛ թուրք բնակչությանը, ստացած փողերը սեփականացնելու համար: Այսպես որինակ՝ 1918 թվին Արտյուշխանն ու Նժդեհը Լենինականից ստանում են 127 հրացան և 250 հազար փամփուշտ, իբր թե զինելու համար Հաջու և Հակոբ Եֆենդու խմբերը: Զինապահեստից ստացած այդ զենքը նրանք ծախում են մի մասն Աղբաբայի թուրք դյուղացիությանը և մյուս մասը՝ Ախալքալաքից յեկած հայերի վրա:

Խմբապետների, մատուցերիստների և սպեկուլյանտների արքայապետության ամբողջ ծանրությունն ընկնում եր Հայաստանի պրոլետարիատի ու չքավոր և միջակ դյուղացիության վրա:

Ադրբեջանի խորհրդայնացումը 1920 թվի ապրիլի 28-ին մի հսկայական ազդակ եր, վորով մասսաների մեջ կուտակված հեղափոխական զայրույթը տարերայնորեն դուրս ժայթքեց:

1920 թվի մայիսին բանվորները, դյուղացիությունը և բանակի մի մասը Հայաստանի Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ապստամբեցին դաշնակցական կառավարության դեմ Ալիքսանդրապոլում

(այժմյան Լենինականում), Ղարսում, Սարիղամիշում, Ղազարխում և Նոր-Բայազետի շրջանում:

Դաշնակցական կառավարութունն ապստամբութեան դեմ զորահավաքի յենթարկեց խմբապետ-մաուզերիստական իր բովանդակ ուժերը և ճնշման դուրս յեկավ: Հաջուրավոր ու հաղարավոր բանվորներ յենթարկվեցին հետապնդման ու հալածանքի:

Դաշնակները չբավականացան այն բոլոր պատերազմներով, վոր մղել էյին նրանք համարյա անընդհատ իրենց ամբողջ իշխանութեան ընթացքում: Նրանք դիմեցին մի նոր ավանդուրդի, Տաճկաստանի դեմ սկսելով մի նոր պատերազմ, վորպէսզի Անդլիայի իմպերիալիստների հրամանով աղատեն այդ միջոցին քեմալականների դեմ կռիւղ Հունաստանին և «նվաճեն» Թյուրքահայաստանը:

Սակայն արնաքամ յեղած, սոված ու մերկ հայ զյուղացիութունն ու բանվորութունը այդ պատերազմը չեր ցանկանում: Բանակում սկսվեց մասսայական դասալքութիւն, և բանակը քայքայվեց: Մեկ-յերկու ամսվա ընթացքում դաշնակներն իրար յետևից հանձնեցին Սարիղամիշը, Ղարսը, Ալեքսանդրապոլը, յերկաթուղագիծը: Այդպիսով հայ բուրժուազիայի և նրա իմպերիալիստ տերերի համար դաշնակցական կառավարութիւնը չխնայեց նոր տասնյակ հաղարավոր զոհեր:

Մայիսյան անհաջող ապստամբութիւնից 6 ամիս հետո 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ բանվորներն ու զյուղացիները Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ և Կարմիր Բանակի յեղբայրական ողնութեամբ տապալեցին դաշնակների տիրապետութիւնը:

Դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում լսելով Հայաստանի խորհրդայնացման լուրը, տաճիկների հետ բանակցութիւն վարող դաշնակցական պատվիրակները ստորագրեցին Տաճկաստանի հետ կնքվող հաշտութեան ամենախայտառակ պայմանագիրը: Այս անգամ նրանք, մի կողմն էյին թողել «մեծ, անկախ, ազատ, ծովից-ծով Հայաստանի» իրենց յերազները: Դրա փոխարեն նրանք բավականանում էյին նախկին Յերեսանի նահանգի մասով միայն և այդ ել փաստորեն դնելով Տաճկաստանի իշխանութեան ներքո: Նրանք պարտավորվում էյին ցրել ամբողջ բանակը, Տաճկաստանին հանձնելով 3 հազար հրացան, 16 հրանոթ, 200 ձի, 98 փոքի, 60 գնդացի և բազմաթիւ հանդերձանք:

149

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին մայիսյան ապստամբութիւնը դաշնակցական խմբաւորւմների ձեռքով ճնշվելուց հետո, Հայաստանի Հեղափոխական Կոմիտեյի զորամասերը, — վոր մեծ մասամբ կազմում էին Ղազարի ապստամբ գյուղացիները, — համարվում էին Ղազարում:

Ռուսաստանի Կարմիր Բանակի կողմից ապստամբներին ողնուծիւն հասցնելն այդ մոմենտին հնարավոր չէր, քանի վոր այդ ժամանակամիջոցին թորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ ընկ. Լեզրանը բանակցում էր դաշնակցական կառավարութեան հետ:

Յերկելով նյս հանգամանքից, ապստամբներին ընդհանուր միտինգում Ռազմա-Հեղափոխական Կոմիտեյի ներկայացուցիչը հայտարարում է.

— Ապստամբութիւնը լիկվիդացիայի յե յենթարկվում, սակայն հեռու չե մեր հաղթանակը դաշնակցական կառավարութեան դեմ, հեռու չե Հայաստանի թորհրդայնացումը: Ով ցանկանում է, կարող է հետևել Հեղկոմին, զնալ Գանձակ և կազմակերպվել Կարմիր Բանակին կից:

Ապստամբներից մոտ 1000 հոգի լավադույն հեղափոխականներ հետևում են Ռազմա-Հեղափոխական Կոմիտեյի առաջարկին:

— Մենք, — ասում են նրանք, — դենք վայր չենք դնի, մինչև վերջնականապես չջախջախենք դաշնակցականներին:

1920 թվի հուլիսի 27-ին նրանցից 967 հոգի բանակային և 36 հոգի հրամատար ուղարկվում են 280-րդ հետևակ դունդը, վորին կից կազմակերպվում է 3-րդ դուժարտակը: Հրամատարներից մոտ 10 հոգի նախկին դաշնակցական սպաներից էին, վորոնք Քարվանսարայի կռիւներից հետո մեր կողմն էին անցել: Հրամակաւոր իր պատրաստութեամբ շատ թույլ էր, իսկ իր համարարութեամբ՝ բավական կասկածելի: Նկատի ունենալով այդ, նրանք 32-րդ դիվիզիայի հրամատար ընկ. Մեղվեղեվի կարգադրութեամբ, ուղարկվում են XI Կարմիր Բանակի 1-ին պահեստի դունդը, վորտեղ պետք է գտնան յենթարկվելին:

Ինչպես պարզվեց հետադայում, այդ սպաների մի մասը մեղ հետ չեր. նախկին սպաներից 7 հոգի կապիտան Սարգսյանի գլխավորութեամբ փախչում են Կարմիր բանակից, կամենալով անցնել մենչեվիկական վրաստանի սահմանները: Գուհ դեռից անցնելիս՝ նրանք հանդիպում են աչալուրջ կարմիր պահակին: Պահակը կրակ է բացում և սպանում է 4 հոգու, 2-ին վիրավորում և միայն մեկին է հաջողվում անցնել դեռի մյուս ափը:

Դիվիզիայի ռազմկոմ ընկ. Ավերիդովից հրաման է ստացվում, 10 որվա ընթացքում պատրաստել աչքի ընկնող կարմիր բանակայիններից հրամկաղմ, դուժարտակի պահանջը լրացնելու համար: Ծանր էր այդ խնդրը, բայց և այնպես շատ հաջող լուծվում է, և հետագայում 3-րդ հայկական հրաձիգ դնդի փայլուն հաղթանակների խոչոր տոկոսը պատկանում է հատկապես հենց կարմիր բանակայիններից առաջ քաշված հրամատարներին:

Հունիսի 3-ին XI Կարմիր Բանակի Հետևակի տե-
սուչը հրաման է արձակում, վորով այլ բանակում
գտնվող բոլոր հայ հրամքադկազմն ու կարմիր բանա-
կայինները պարտավորվում էին 10 որվա ընթացքում
ներկայանալ բանակի տեսչին՝ նրանցից հայկական դո-
րամաս կազմակերպելու համար: Հունիսի 25-ին Բա-
յրում, Զիրում և 1-ին պահեստի գնդում XI բանակի
ղնազան զորամասերից արդեն հավաքվել էին 216
հայ բանակայիններ ու հրամկազմ: Այդ թվին 1-ին
Հայկական գումարտակից ավելացվում է 150 հոգի և
հունիսի 27-ին 281-րդ գնդին կից կազմակերպվում է
2-րդ հայկական գումարտակը:

Այդպիսով Հայաստանի Կոմկուսի Արտասահման-
յան Բյուրոյի և XI Կարմիր Բանակի Հեղափոխական-
Ռազմական Խորհրդի անմիջական և ակտիվ ղեկավա-
րությամբ և Բազմի պրոլետարիատի ամենաջերմ ա-
ջակցությամբ՝ Հայաստանից փախած բանվորներից,
գյուղացիներից և XI Կարմիր բանակում գտնվող հը-
րամքադկազմից ու բանակայիններից կազմակերպվում
է հայկական 2 գումարտակ: Այդ 2 գումարտակների
հրամքադկազմի նշանակումը, բանակայինների քաղա-
քական ղեկավարութունը, գտնվում էին Հայաստանի
Արտասահմանյան Բյուրոյի անմիջական ղեկավարու-
թյան տակ: Այդ ղեկավարութունը բյուրոն տարա-
ծում էր գումարտակները վրա 32-րդ դիվիզիայի քաղ-
րաժնի միջոցով: 280 և 281-րդ գնդերի անձնական
կազմի մեծամասնությունը կազմում էին հենց հայ-
կական գումարտակները, վորովհետև մյուս գումար-
տակներում համարյա մարդ չկար. այսպես որինակ՝
280-րդ գնդի ցուցակներով գնդում հաշվվում էր 670

հոգի, մինչդեռ ներկա յեր միայն 190 հոգի. մյուս-
ները տառապում էին մալարիայով և այլ հիվանդու-
թյուններով և գտնվում էին հիվանդանոցներում:
Այդպիսով ամբողջ Բազմի կայազորի պահակային ծա-
ռայութունը, վորի համար պահանջվում էր մոտ 470
հոգի, տանում էին Հայկական զորամասերը: Բացի
քաղաքում յեղած պոստերից, նրանք պահակային ծա-
ռայութուն էին տանում նաև Նարզեն կղզու վրա,
վորտեղ պահվում էին Դենիկինի բանակից դերի վեր-
ցրած զենքերայներն ու սպաները:

Հայկական նորակազմ զորամասերը գտնվում էին
աննկարագրելի դժվարին պայմաններում. բավական է
հիշատակել, վոր նրանց անձնական կազմի 96 տոկոսը
չունեի զրատներ (չինեղներ), 91 տոկոսը զուրկ էր
հագուստեղներից, կոշիկներ ու կիսակոշիկներ ուներ
միայն 13 տոկոսը, իսկ տրեխներ՝ 49 տոկոսը. մնացած
38 տոկոսը միանգամայն վտարորել էր: Յեվ այնու-
ամենայնիվ չնայած նման ծանր պայմաններին, 1920
թվի դաժան ձմռանը (այդ տարին նոյեմբերին արդեն
սոսկալի ցրտեր էին Բազմում), բանակայինները տա-
նում էին իրենց ստանձնած հեղափոխական պարտա-
կանութունները վերին աստիճանի բարեխղճ կեր-
պով: Նրանց մեջ դժգոլութուն կար միայն մի բանի
համար. դանդաղում էր հարձակումը:—Շուտ հար-
ձակման անցնել դաշնակ Հայաստանի դեմ, աղատել
դաշնակների ծանր լծից բանվորներին ու գյուղացի-
ներին,—հա բոլորի պահանջը:

Նոյեմբերի 10-ին գաղտնի հրաման է ստացվում
բանակի Ռազմա-Հեղափոխական Կոմիտեյից, վորով
առաջարկվում է տեղափոխել 280-րդ գնդից 281 և

282-րդ գնդերը բոլոր ուսուցիչներին, բացառությամբ գնդացրային ու կապի վաշտերից և հետախուզության դասակից: Մյուս կողմից հայերին 281-րդ գնդից տեղափոխել 280-րդ գունդը: Նույն ուրը ժամի 24-ին բանակի շտաբից ստացվում է հեռախոսագիր № 216, վորի համաձայն 280-րդ գունդն անվանվում է XI Կարմիր բանակին կից Առաջին Հայկական գունդ: Յերկուս ուր անց, նոյեմբերի 12-ին 1-ին Հայկական գունդը վերանվանվում է՝ XI բանակի Հայկական Առանձին գունդ, վորին վիճակված էր նոյեմբերի 29-ին բոլորից առաջ անցնել սահմանը, մտնել Դիլիջան և ապա Յերեվան և կազմել ասլադա Հայկական Կարմիր բանակի հիմնական կորիզը:

Նոյեմբերի 11-ին առավոտյան ժամի 10-ին ինձ կանչում են 94-րդ հրաձիգ բրիգադի շտաբը և հրամայում ընդունել նորակազմ Հայկական գնդի հրամատարությունը: Միևնույն ժամանակ պատվիրվում է նոյեմբերի 12-ին գունդը բերել Բազմի կայազորի գլխավորական պլատֆորման, վորտեղից նա մեկնելու յի Ռոստով Կովկասյան ջոկատի հրամատարի տրամադրության տակ: Այդ այն ժամանակն էր, յերբ հակահեղափոխական զեներալ Վրանդելի բանակը հաջողությամբ մոտենում էր Մարիուպոլ քաղաքին և սպառնում էր Մոսկվա-Ռոստով յերկաթուղադնին:

Նոյեմբերի 12-ի առավոտյան գունդն արդեն կազմ ու պատրաստ սպասում էր կայարանում: Նույն ուրը ժամի 10-ին տեղեկություն է ստացվում բանակի շտաբից, վոր դաշնակցության բանակն սկսել է հարձակումներ գործել Ջանգեղուրում գտնվող կարմիր դորամասերի դեմ, վոր նա մոլորեցնելով ու գրգռելով

Կարմիր բանակի դեմ տեղական թեախությանը, վորոշ հաջողություններ ունեցել: Դրա հիման վրայենթադրվում է Հայկական գունդն ուղարկել Ջանգեղուրի ջոկատը:

Վերջապես՝ ժամի 4-ին, յերբ գունդն արդեն ամբողջովին տեղավորված էր վազոններում և պատրաստ էր մեկնելու, հրաման է ստացվում Յեվլախով մեկնել Դայլար կայարանը: Դայլարում գունդն անցնելու յեր 60-րդ բրիգադի հրամատարի տրամադրության տակ, վորից և հրաման էր ստանալու յի հետագա անելիքների մասին: Նոյեմբերի 13-ի ժամի 12-ին գունդն արդեն Դայլար կայարանումն էր: Այստեղ 6 ժամ հանդարտանալուց հետո, գունդը շարժվում է Անենիֆեյլդ գյուղը (գերմանական դադութ), վորտեղ գտնվում էր 60-րդ բրիգադի շտաբը: Գիշերելով այդ գյուղում, գունդը նոյեմբերի 14-ի առավոտյան հրաման է ստանում շարժել Գետաբեկի պղնձահանքերի շրջանը, յնդիր ունենալով՝ պահպանել Ռոհրդային Ադրբեջանի սահմանները դաշնակների բանդաներից: Միևնույն ժամանակ գունդը պետք է պատրաստ լիներ հրաման ստանալուն պես հարձակման անցնել: XI բանակի Հայկական Առանձին գունդն ամբողջ մի շաբաթ կանգնած էր Գետաբեկի պղնձահանքերի շրջանում: Դաշնակցական բանդաներից մեկը հավաքված էր Բաշքենդ գյուղում, նույն գյուղի տերտերի գլխավորությամբ:

ԱՊՍԱՍԱԲՆԵՐԻՆ ՈԳՆԵԼՈՒ

Սաստիկ ցուրտ էր:

Գունդը պարենն ստանում էր Անենիֆեյլդից: Վորովհետև սաստիկ ցեխ էր, և պարենն ստացվում էր

չատ դժվարությամբ, դունդը մի քանի որ մսի ու հացի յերես չեր տեսել: Բայց կարմիր բանակայինների կողմից վոչ մի դժգոհություն չեր նկատվում: Նրանք գիտակցում էին, վոր Կարմիր բանակի վրա դրված է մեծ պարտականություն, այն է՝ ազատել Հայաստանի ժողով աշխատավոր գյուղացիությունը դաշնակցական թալանչի մատուցերիստների ձեռքից:

Նոյեմբերի 26-ի առավոտյան առաջին դրամաբեռակի հերթապահն ինձ հայտնեց, վոր գինվորների կողմից «Բեղավոր» Արշակը խոսք ունի ասելու:

«Անշուշտ հարցը մթերքների չստանալու մասին է» — մտածեցի յես ու կարգադրեցի կանչել: Բայց յես օրոշվեցի: Նա, ինչպես և մնացած գինվորները, խոսք տնգամ չասաց այն մասին, վոր յերեք որ հացի յերես չեն տեսել:

Նա առաց այն, ինչի մասին ինձ շատ անգամ էին գիմել ուրիշները:

— Այս գիշեր թաթուղա դյուղից, ազատվելով դաշնակների ձեռքից, յեկել ե գյուղացի Մարտանյան իվանը, — այսպես սկսեց իր խոսքը «Բեղավոր» Արշակը:

— Մարտանյանը պատմում է, վոր մատուցերիստները գյուղերն ընկած բռնաբարում են մեր կանանց ու օրորերին և թալանում են մեր գյուղացիներին:

— Ընկ. հրամատար, արդո՞ք յերկա՞ր պիտի նըստենք: Ի՞նչ է մտածում մեր կուսակցությունը: Ի՞նչ է մտադիր անելու կարմիր հրամատարությունը: Դեռ յերկա՞ր պիտե՞ք թույլ տաք այս ավազակներին տանջելու խեղճ գյուղացիներին: Խնդրում եմ միջոցներ ձեռք առնել, — յեզրակացնում է հուզված Արշակը, — արագացրե՞ք Հայաստանի խորհրդայնացումը:

Սրշակը և վոչ ել Մարտանյանը առաջինը չեին, վոր դիմում էին նման խնդրով:

Նոյեմբերի 20-ից սկսած բազմաթիվ պատգամավորություններ էին գալիս Ղազարի գյուղացիներից, վորոնք անցնելով սահմանը, կարմիր զորքերի աջակցությունն էին խնդրում դաշնակ կառավարությանը տալալելու համար: Նրանք լավ գիտեին, վոր առանց այդ ոգնության դաշնակներին «կտապալեր Կարաբեքիրը, կամ «Լավադույն» դեպքում, դաշնակներն իրենց խմբապետներով կարող էին աճապարել տալալելու հեղափոխությունը:

Յերկրի սահմանադիսին կանոնած եր արդեն կուսակցության Արտասահմանյան բյուրոյի կազմակերպած Հայաստանի Ռազմա-Հեղափոխական կոմիտեն: Վերջինս իր տրամադրության տակ ուներ կոմունիստական վոգով դատարարակված և միանգամայն մաքրուանակ Առանձին Հայկական հրաձիգ դունդը, վորն ամեն բոլե պատրաստ եր կատարելու կուսակցության Արտասահմանյան բյուրոյի և Ռազմա-Հեղափոխական կոմիտեի կողմից գնդի վրա դրած յուրաքանչյուր խնդիրը:

Նոյեմբերի 26-ին, յերեկոյան, հեռագիր ստացվեց, վոր Վրանգելը ջախջախված է:

Գունդը հրաման է ստանում չարժվելու Աղստաֆա: Նոյեմբերի 28-ի գիշերվա ժամի 12-ին դունդը հասնում է Աղստաֆա. այդտեղ գնդի հրամատարը հրաման է ստանում չարժվել դեպի Ղազար և այնտեղ ըստպել հրամանի:

Առավոտյան ժամի 6-ին հասնում ենք Ղազար:

Այստեղ գնդին տրվում է տաք կերակուր, վորից զին-
վորները զուրկ եյին յեղեղ ամբողջ տաս ուր:

Հանկարծ հրաման ե ստացվում, վոր ամբողջ
գունդը պետք է պատրաստ լինի առաջ շարժվելու:
Բայց դեպի ո՞ւր... վոր վոր չգիտե:

Նոյեմբերի 28-ի առավոտյան ժամի 10-ին գլխա-
վոր շտաբից հրաման ե ստացվում, վորի համաձայն
17-րդ դիվիզիայի հրամատար ընկ. Կուրբիչկային
հանձնարարվում ե կաղմել մի ջոկատ: Զոկատը պետք
է բաղկացած լինի 4 հեծյալ գնդից, հայկական առան-
ձին գնդից ու 18 թնդանոթից: Զոկատը պետք է պատ-
րաստ լինի հարձակման դիմելու:

11-րդ Բանակի Հեղափոխական Ռազմական Խոր-
հուրդը մի գրութիւն եր ստացել Հայաստանի ապրս-
տամբած բանվորների ու գյուղացիների անունից, վո-
րով բանակից պահանջվում եր առաջ շարժվել և աղա-
տել Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին:

Նոյեմբերի 29-ի առավոտյան լուսարացին Յերե-
վանի զորախումբն ընկ. Կուրբիչկայի գլխավորութեամբ
հարձակման անցավ յերկու զորասյունով: Առաջին զո-
րասյունը շարժվում եր Սև-Քարի վրա, յերկրորդը՝
Իջևանի:

Իջևանի ուղղութեամբ գործող զորամասերը ժամի
յերկուսին գրավում են Իջևանը:

Սև-Քարի վրա շարժվող մասերը հորդ անձրևի
տակ, սաստիկ ցեխով, զինաթափ են անում դաշնակ
միլիցիային և պահպանութեան զորամասերին և յերե-
կոյան ժամի 7-ին հասնում են Սև-Քար գյուղը: Զոկա-
տի մեջ կային 72 զինվոր Սև-Քարից:

Գյուղացիները մեծ խանդավառութեամբ ընդունե-

ցին Կարմիր Բանակին: Տեղական կուսակցական բջիջը,
վորն իր կազմում ուներ 130 հոգի կուսանդամ և հա-
մակրողներ, դիմեց ինձ, վոր թույլ տամ ջոկատը պա-
հել իրենց մոտ, վորպեսզի զինվորները հանգստանան:

Այդ ուր մեծ տոն եր ամբողջ գյուղացիութեան
համար:

Յուրաքանչյուր գյուղացի ուզում եր մի քանի զին-
վոր տանել իր սունը հյուրասիրելու համար:

Այդ առթիվ թյուրիմացութեաններ են ծագում: Տե-
ղական բջիջը դիմում ե ինձ և հարցնում, թե կարո՞ղ
ենք արդյոք ամեն տան տալ յերեք-չորս զինվոր, գյու-
ղացիների պահանջը բավարարելու համար: Մենք ունե-
յինք ընդամենը 300 զինվոր: Գյուղացիների այդ պա-
հանջը լիովին բավարարել մենք չէինք կարող, ուստի
վորոշեցինք զինվորներին չբաժանել:

Գյուղացիներն իսկույն պատրաստեցին ընթրիք:
Նրանք մորթել եյին մոտ 10 խոզ. գյուղում այնպիսի մի
տոն եր, վորի նմանը Սև-Քարը չեւ տեսել:

Հայաստանի խորհրդայնացման առաջին օրն եր:

Այդպիսով Հայաստանի աշխատավորութեանն ա-
պրտամբում ե և 11-րդ Կարմիր բանակի ողնութեամբ
յերկրից դուրս ե քշում հայկական բուրժուազիայի
Փաշխոտական կուսակցութեան—Դաշնակցութեանն իր
թալանչի խմբապետների ու մատուցերիստների հետ
միասին: Հայաստանի ապստամբ բանվորների ու գյու-
ղացիների անունից Հայաստանի Հեղափոխական Կոմի-
տեն, կոմունիստական կուսակցութեան վորոշմամբ,
1920 թվի նոյեմբերի 29-ին հայտարարում ե Խորհրդա-
յին իշխանութուն: Խորտակվեց իր բոլոր նախաձեռ-
նութեաններն մեջ կատարելապես անանկացած այն կա-



դավաբութիւնը, վոր ցարական Ռուսաստանի ավերակները վրա կաղմակերպվել էր Հայաստանի հայ բուրժուազիայի ֆաշիստական կուսակցութեան—Դաշնակցութեան—ձեռքով։ Հայաստանի Խորհրդային իշխանութիւնը ծնունդ առնելով Իջևանում, կաղմակերպվեց բաղնիկի դժվարին պայմաններում։ Հայթիւրքական խելացնոր պատերազմը, վորի մեջ նեւովեց Անտանտայի դրոճամբ վոճրադործութեան աստիճանի միամիտ դաշնակցական կառավարութիւնը Անտանտայի ծրագրով պետք է թուլացներ իր դոյութեան համար կովող ազգային—հեղափոխական թիւրքիայի թիկունքը։ Նոյեմբերի 29-ին, հեղափոխութեան մոմենտին թիւրքերը ձեռքումն էին դանվում Ալեքսանդրապոլը և յերկաթուղու մի մասը՝ իսկ դեկտեմբերի 2-ին թիւրքական յերկու հեծելազոր գունդ հասել էին Ղարաբեղիսայի մոտերքը։

Նոյեմբերի 29-ին դեներալ Խանկալաճովը հայտնում է դաշնակ կառավարութեանը, վոր Իջևան են մտել 30-40 կարմիր բանակայիններ, վորոնք առաջարկում են սահմանապահ զինվորներին վինալթաի լինել։ Մի ժամ չանցած և դաշնակ կառավարութեանից պատասխան չստանալով դեներալը հաղորդում է, վոր կարմիրները մտել են Իջևան և ձերբակալել են սպաներին։ Սեպուհը ձիավոր ու հետեւակ զորամասեր և ուղարկում Իջևանի ուղղութեամբ և հրամայում է զնգապետ Մանիւկին կաղմակերպել մի ջոկատ իր գլխավորութեամբ և կարմիրներին հետ շարտել սահմանից դուրս։ Սակայն Սեպուհի այդ հրամանը նոյեմբերի 30-ի ժամի 2-ին Ջառխեչ գյուղում ընկնում է իմ ձեռքը։ Կապվելով հեռախոսով Սեպուհի հետ յես Մանիւկի բերանից պատասխանում եմ,

—Յես ամբողջ շտաբով բանտարկված եմ հայկական կարմիր զնդի կողմից և դանվում եմ Ջառխեչ գյուղում։ Քեզ համար ել տեղ ունենք պատրաստած,— ալեկացնում եմ յես։

Սեպուհը կտրում է կապը, և փոխելով մի 2 ժամ առաջ իր տված հրամանը, փախչում է իր զորամասերով դեպի Յելենովկա և ախտեղից էլ Հայաստանի սահմաններից դուրս։

Նոյեմբերի 30-ին, յերեկոյան, 18-րդ հեծելազոր դիվիզիայի 2 բրիգադ, հայկական Առանձին գունդն ու մի հրետանու բաժնյակ Կուսակցութեան Արտասահմանյան բյուրոյի և Ռազմա-Հեղափոխական կոմիտեյի անմիջական ղեկավարութեամբ մտնում են Դիլիջան։ Դիլիջանում գերչերում ենք. Հայկական առանձին գունդն իր վրա յե վերցնում քաղաքի կարգապահութիւնն ու արտաքին թշնամիներից պաշտպանելու գործը։

Դեկտեմբերի 1-ին մնում ենք Դիլիջանում։ Այդ որը սաստիկ ցուրտ էր։ Գնդի կազմի համարյա 90 տոկոսը վոտարորիկ էր և գուրկ տաք շորերից։ Այստեղ յես դիմեցի ընկ. Հայկադ Կոստանյանին, խընդրելով հնարավորութեան ստեղծել գունդը հազցնելու։ Նրա կարգադրութեամբ կաշի ստացանք տրեխներ պատրաստելու համար. իսկ շորեղենը խոտացան տալ Յերեւան գալուց հետո։ Այդ որը տրեխներով ապահովեցինք համարյա բոլոր կարմիր բանակայիններին, բացի 9 հոգուց, վորոնց վոտքերը ցրտից սառել և ախքան ուռել էյին, վոր տրեխներ հազցնելու հնարավորութեան չկար։ Այդ որը բացի դրանից ստացանք 100 հատ տաք ֆուֆայկա և բաժանեցինք ալեկի վատ

հաղնված ու հիվանդ ընկերներին: Դեկտեմբերի 1-ին
գնդապետ Արուշանովի թալանած խողերի հաշվին բա-
նակայիններին մի լավ ճաշ տվեցինք:

Դեկտեմբերի 2-ին, լուսաբացին, 18-րդ հեծյալ
գլխավորի հրամանատար ընկ. Կուրիշկինի կողմից
հրաման տրվեց մի հեծելազոր բրիգադ ուղարկել Ղա-
րաքիլիսա, վորովհետև տեղեկություններ կային,
վոր թյուրքերը մոտենում են քաղաքին, առանց վորեն
գլխավորության գտնելու: 2-րդ հեծյալ բրիգադը Ա-
ռանձին Հայկական զորի հետ միասին բրիգադի հը-
րամատար ընկ. Յերմոլենկոյի գլխավորությամբ
պետք է հարձակվեր Դիլիջան-Յերեվան խճուղով,
ճանապարհին զինաթափ անելով դաշնակ զորամասե-
րին, պետք է հասներ Յերեվան, վորտեղ կազմեր քա-
ղաքի կայազորը, ապահովելով յերկրի սահմանները և
քաղաքի կարգապահությունը: Դեկտեմբերի 3-ին ջո-
կառը հասավ Զիբսլու դյուլը, վորտեղ զինաթափ ա-
րինք դաշնակները 7-րդ և 8-րդ գնդերը և մի քանի
մարտիկ: Զինաթափ արած զորամասերի համար կազ-
մակերպվեց միտինգ:

Դաշնակ գնդերի զինվորները մեր զորամասերին
գլխավորում էին խանդավառությամբ, ջերմ համ-
բույրներով: Նրանցից մի քանիսը դուրս յեկան մի-
տինգում և կրակոտ ճառեր արտասանեցին, վորտեղ
մի քանիսն առաջարկում էին սպաններին անմիջապես
բանտարկել, իսկ վրմանք պահանջում էին մինչև իսկ
գնդակահարել: Կարմիր զորամասերը, գտնվելով ի-
րենց կոչման բարձրության վրա, պահանջում էին ամեն
նախնու կարգապահություն: Նրանք դաշնակ գնդերից
ու զինվորներից մի լուցկի անգամ չեյին վերցրել: Սա-

կայն դաշնակ զորամասերի սպանները բացահայտ թշնա-
մական վերաբերմունք էին ցույց տալիս: Այդ 2 գնդի
ընդհանուր հրամանատարն էր գնդապետ Իշխանյանը,
իսկ ընդհանուր ջոկատի հրամատարը՝ գեներալ Սան-
կարամովը: Իրենց կաշին փրկելու համար սպաններից մի
քանիսը գնդապետ Իշխանյանի գլխավորությամբ բողո-
քում են, վոր կարմիր բանակայինները թալանում են
դաշնակ զինվորներին և սպաններին: Ստուգումից պար-
զվում է, վոր այդ բողոքը միանգամայն սուտ է. հեծ-
գնդից մի բանակային վերցրել էր յերկրի տակ, վոր նը-
րան իր ձեռքով տվել էր սպան (պարուչիկ Սահակյանը):
Յերբ Իշխանյանին հարց ենք տալիս, թե ինչու յե սը-
տում, նա նորից պնդում է, ասելով.

—Յես իմ աչքով տեսա, վոր իմ հայրենակիցներից
(զարաբաղցիներից) մոտ 20 հոգի զբաղվում են թալա-
նով:

Այդ հայտարարությունից հետո նորից հետաքննու-
թյուն է կատարվում: Պարզվում է, վոր հայկական գըն-
դում կա միայն 2 զարաբաղցի, վորոնք վարում են գրա-
գրի ու մթերապահի պաշտոն և այն ել հրամատարի
կարգադրությամբ մնացել էին Դիլիջանում: Զինաթափ
յեղած զինվորներին ուղարկեցինք զինվարական կոմի-
տարիատի տրամադրության տակ, իսկ սպաններին գըն-
դապետ Իշխանյանի ու գեներալ խանկալամովի հետ՝
Դիլիջանի Ձեկայի կարգադրությանը:

Դեկտեմբերի 6-ին զորամասերը հասան Քանաքեռ,
վորտեղ տեղավորվեցին: 105 և 106 հեծելազոր գնդե-
րի մի մասը տեղավորվեց Քանաքեռում, մյուս մասը՝
Յերեվանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Նոր կյանքի շեմքին կանգնած Հայաստանի խորհրդային Իշխանության առաջ ծառայել և իրենց լուծումն ելին պահանջում մի շարք խնդիրներ տնտեսական, կուլտուրական և քաղաքական ասպարեզում: Քաղաքական այնպիսի պայմաններում, յերբ թշնամին վերջնականապես ջախջախված չէր, կարևորագույն և ամենահրատապ խնդիրն էր ռազմաօդային բանակի կազմակերպությունը: Դաշնակցական լքված, խմբապետական բանակի փոխարեն անհրաժեշտ էր ստեղծել կանոնավոր Բանվորազյուզակական հեղափոխական Կ. Բանակ՝ պաշտպանելու համար խորհրդային Իշխանությունը թե արտաքին և թե ներքին թշնամիներից: Չափազանց ծանր էր այդ խնդիրը: Ամենադժվար դժվարությունն առաջ էր դառնում յերկրի սուր տնտեսական ճգնաժամից: Պատերազմից ավերված ու դադարեցրած հոսանքներով հեղեղված յերկրում տիրում էր սովը: Դրան ավելացավ 1921 թվի բացառիկ դաժան ձմեռը: Բայց այդ դժվարություններն ու խոչընդոտները չհուսահատեցրին Ռազմա-Հեղափոխական Կոմիտեին: Կարմիր Բանակը Հեղկոմի գործնեյություն ամբողջ ժամանակաշրջանում կառավարության հատուկ հողացողություն առարկան էր: Հայաստանի Կ. Բանակը կազմակերպվում է ռուսական Կարմիր Բանակի հիմունքներով: 20 թվի ղեկավարների 2-ի հրամանով Հայաստանի զորքերը վերակազմվում են Կարմիր Բանակի: Կարմիր Բանակի կազմակերպման համար խորհրդայնացման առաջին իսկ օրից կատարվում է խոշոր կազմակերպչական աշխատանք, ռուսական Կարմիր

Բանակի օրինակով մասցվում է կոմիտաների ինստիտուտ և հեռացվում են իրենց կոնսերվատիվով աչքի ընկնող սպաները՝ գլխավորությամբ Նազարբեկովի, Սիլիկովի, Սանկարամովի, Շելկովիկովի և այլ ղեկավարների: Հեռացվում են նաև մի շարք վրանդելյան ու դենիկինյան սպաներ, վորոնք ապաստան ելին դառնալու դաշնակցականների մոտ: Դեկտեմբերի 5-ին Հեղկոմի ղեկավար համաձայն կազմակերպվում է Հայաստանի Ռազմաօդային կորպուսի համաձայն բարձր հասակի զորացրումից հետո Հայաստանի կարմիր զորամասերը կազմում են 3 առանձին հրաձիգ բրիգադ, մի հեծյալ բրիգադ, 4 հրետանական բաժնյակ, 4 ջոկատ, 2 առանձին դումարտակ, 2 զրահագնացք և այլ մասնաբաժնային զորամասեր: 1921 թվի փետրվարի 1-ին բանակն իր շարքերում հաշվում էր 6.000 սվին, 44 հրանոթ, 2 զրահագնացք՝ ղինված 5 հրանոթով ու 35 դնդացրով, 236 դնդացիր, 835 թուր, և մասնաբաժնային զորամասեր:

Հետևազորը ղինված էր մեծ մասամբ այն հրացաններով, վոր անցել էին դաշնակցական բանակին՝ նահանջող ռուսական բանակից, մասամբ «Ռուսսե» սիստեմի հրացաններով (40.000 հրացան և 400 դնդացիր, վոր. արված էր անդլիական կառավարության կողմից դաշնակցական կառավարությանը՝ պաշտպանելու համար դաշնակցների լծի դեմ ապստամբած Հայաստանի բանվորների ու դյուզագյինների և բայլելիզմի դեմ), այլև «Լեբել» սիստեմի հրացաններով, վոր մեծ քանակությամբ մնացել էին Կարսում և Ալեքսանդրո-

սլոլում ցարական կառավարութեանց: Կային նաև «Մաքսիմ», «Կոլոտ» և «Վիկկերս» սխտեմի գնդացի-րուներ:

Հեղինակի դեկրետի հիման վրա Ռազմաօդկոմատի դեկտեմբերի 12-ի հրամանի համաձայն կազմակերպվում է Բանակի քաղաքական վարչութիւնը, վորի հիմնական խնդիրն էր, յեղնելով Ռուսաստանի Կարմիր Բանակի փորձից, ամբասցնել Բանակի վոդին և մաս-ստջի առաջ ճշտել նրա քաղաքական խնդիրները: Քաղ-վարչութեան հիմնական կորիզը, նրա կազմը, կազմում եյին առանձին հայկական գնդից Քաղվարչութեան տրամադրութեան տակ դրված 97 կոմունիստները: Նը-րանք նշանակվում եյին հայկական նոր կազմակերպ-վող զորամասերի ռազմական կոմիսարներ, սրանց օգ-նականներ և այլ պատասխանատու պաշտոններ:

Բանակի կազմակերպման գործում տեղ եյին դրա-վում պարենաւորման մարմինները: Բանակի գոյու-թեան համար անհրաժեշտ նյութական պայմաններ ըս-տեղծելը գեկավար մարմինների հիմնական խնդիրն էր: Սոված, դաշնակների ձեռքով ծայր աստիճան չը-քաւորութեան հասցրած յերկիրը, պարզ էր, շատ բան տալ չէր կարող: Արտաքին դրութիւնը հնարավորու-թիւն չէր տալիս զգալի ոգնութիւն ստանալու ՌՍՖՍՀ-ից, Խորհրդային Ադրբեջանից և Գ-րդ Բանակի մա-տակարարման բազայից, վորովհետև թյուրքիայի հետ զաշնակների կնքած պայմանագրի համաձայն՝ յեր-կաթուղին դռնվում էր թյուրքական զորքերի արա-մադրութեան առիկ, իսկ Յերեան—Դիլիջան—Աղստա-ֆա ճանապարհով մթերք ստանալն անհնար էր 1921 թվի դաժան ձմռան պայմաններում: Բայց և այնպէս

մեղ հաջողից վոչ միայն հաղթահարել այդ բոլոր խոչընդոտները, այլև հնարավոր յեղաւ Ռազմաօդկո-մի դեկտեմբերի 20-ի հրամանի համաձայն Հայաստա-նի Կարմիր Բանակը պարենաւորման տեսակետից լի-ովին հավասարեցնել ՌՍՖՍՀ 11-րդ Կարմիր Բանակին:

Պարտված, բայց տակաւին չզինաթաւված հա-կահեղափոխութիւնից պաշտպանվելու համար դեկ-տեմբերի 6-ի դեկրետի համաձայն նոր կազմակերպված բանակում հակահեղափոխութեան, չարաչառութեան, չպիտոնաթի և պաշտոնեյական հանցագործութիւն-ների դեմ կովելու նպատակով Հայաստանի Արտա-կարգ Հանձնաժողովին կից կազմակերպվում է հայկա-կոն Կարմիր Բանակի Հատուկ Բաժինը, վորը մեծ դեր է խաղում մեր Բանակի կազմակերպման և հակահե-ղափոխութեան դեմ կովելու գործում:

Հին կարգերից ժառանգութիւն մնացած դա-սաւըութիւնը նույնպէս դեռևս գոյութիւն ուներ Բա-նակի գոյութեան սկզբնական շրջանում: Այդ չարիքի դեմ կովելու համար թե՛ կենտրոններում և թե՛ դա-վառներում ստեղծվում են հատուկ հանձնաժողովներ՝ Ռազմաօդկոմի 1920 թվի դեկտեմբերի 21-ի հրամանով: Նույն ամսի 8-ին Ռազմաօդկոմի դեկրետի համաձայն ապահովվում են հաջմանդամ կարմիր բանակային-ներն ու նրանց ընտանիքները, իսկ 1921 թվի հունվարի 4-ի դեկրետով ապահովվում են նաև ղինվորական ծա-ռայութեան կոնջված կարմիր բնակալիկների ընտա-նիքները:

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՆ

ԿԱՐՄԻՐՆԵՐԸ ԹՈՂՆՈՒՄ ԵՆ ՅԵՐԵՎԱՆԸ

Այդպիսով արդեն պետք է սկսվեյին հայկ. նորահաղմ կարմիր բանակի ուսուցման որերը: Սակայն Հայաստանի աշխատավորության թշնամիները, — դաշնակիները, — պարտաված էյին, բայց վերջնականապես ջախջախված չէյին: Նրանք տակավին չէյին կորել իրենց հույսը իշխանությունը կրկին իրենց ձեռքն առնելու, և յերկրի տերը դառնալու մասին:

Յեվ ահա 1921 թվի փետրվարի 15-ին հայկական կարմիր բանակի շտաբում ճշգրիտ տեղեկություններ են ստացվում, վոր Բաղդյանիում գոյություն ունի ապստամբ դաշնակիների շտաբը՝ դնդ. Թարխանյանի գլխավորությամբ: Տեղեկություն ե ստացվում, նաև, վոր Բաղդյանի Քերիիչլու շրջանում խմբավորվել են բանդաներ թվով 1000 հոգի: Փաստորեն բացի դրանից ապստամբ դաշնակիներից մոտ 600 հոգի գտնվում էյին Թաքարլու-Շիրաղալա (Ապարանում) գյուղերի շրջանում, 100 հոգի գտնվում էյին Վերին ու Ներքին Նեջրվի շրջանում. իսկ Յերևանում գտնվում եր մաուդերիստների մի ջոկատ:

Փետրվարի 15-ին հայկական Կ. Բանակի հրամատար ընկ. Մալկաչանովն ընդունում ե հետևյալ վճիռը, — Թողնել վոր բանդան մոտենա Յերևանին, կորել նրան իր բաղայից ու շտաբից և վոջնչացնել:

Մյուս կողմից դաշնակցական հրամատարությունը փետրվարի 14-ին ընդունել եր հետևյալ վճիռը. — կորել Յերևան. — Դիլիջան խճուղին, վորը հաղորդակցության ճանապարհն եր հանդիսանում հայկական կամիր բանա-

կի և XI բանակի միջև, ողակել և վոջնչացնել կարմիրների բրիգադները մաս-մաս, յթողնել, վոր կարմիրները նահանջեն Դիլիջան Ղամաբլու: Գրավել Յերևանը փետրվարի 18-ին և զլիսովին վոջնչացնել բոլոր բայլեփիկներին:

Փետրվարի 16-ին դաշնակիները, յետ մղելով հայկական 5-րդ դնդի զորամասերը, գրավում են Նյառ-Մհուր պոստը, կորելով կարմիր զորամասերի կապը XI բանակի հետ: Մյուս կողմից հակառակորդը փետրվարի 17-ի լուսարացին հարձակման ե անցնում Նջմիածնի ու Փարաքարի վրա և Աշտարակ-Յերևան խճուղիով: Հակառակորդի զորասյունները, 2-րդ հայկական բրիգադի զորամասերին անակնկալի բերելով, զինաթափում են 4-րդ հայկ. դունդը, գրավում բրիգադի շտաբը, հրամատարի, ռազմկոմի և 8 թեթև թնդանոթային մարտկոցների հետ միասին, վոր խճուղով ընթանում եր դեպի Յերևան, քաղաքի կայապորն ուժեղացնելու նպատակով:

Փետրվարի 17-ին Նջմիածնի և Աշտարակի շրջաններն արդեն գտնվում էյին խմբապետ Սմբատի խմբակի ձեռքում: Սմբատի խմբակը Յերևան Նջմիածնի խճուղով կենտրոնանում ե Դավթայի այգիների արևմտյան ծայրում: Նա հեծելազորն առաջ ե քաշում՝ Չանդու գետի մոտ՝ կամուրջը գրավելու նպատակով և դրանով իսկ անմիջական վտանգի տակ դնում Յերևանը: Այս առաջին կռիվներում կարմիր զորամասերը կոմունիստների ղեկավարությամբ ցուցահանում են իրենց տոկունությունն ու մարտական կորովը: Չնայած նրան, վոր յերկու ուղիս անընդհատ կռիվներից նրանք սաստիկ հոգնել էյին, նրանք չարունակում էյին զլմանալ հակառակորդի գերազանց ուժերի ճնշմանը: Մեր զորամասերի հրա-

մատարութիւնը ընկ. Յերմոյենկոյի ջոկատն ուղարկում է 1-ին հայկական զնդին նեցուկ. բայց ջոկատը դեռ ֆանաքեռ չհասած հանկարծ ողակվում է: 4 ժամ ջոկատը ողակված վիճակում հերոսաբար կռւում է իրեն 3 անգամ դերազանցող թշնամու դեմ: Բայց չնայած նրա հերոսական դրոժողութիւններին, նա մեծ դուռնի տասնյակ մարդ, ստիպված է լինում հանձնվել թշնամուն, մարտի դաշտում թողնելով բաղմաթիվ սպանվածներ ու վիրավորներ (դրանց թիւում է ընկ. Յերմոյենկոն) և «Մաքսիմ» 6 զնդացիր:

Հակառակորդն արդեն ողակել եր քաղաքը հյուսիսից և արևմուտքից: Մարտերը տեղի էյին ունենում Կոնդ արվարձանի և Յերևան-Եջմիածին խճուղու վրա ընկնող Զանգու գետի կամուրջին տիրելու համար:

Հրամատարութիւնը դրութիւնը համարում է որհասական: Նա դառնում է, վոր յեթե փետրվարի 18-ին թարմ ուժեր չհասնեն, ստիպված պետք է Յերևանը թողնել հակառակորդին:

Փետրվարի 17-ի լույս 18 գիշերը հակառակորդը Նորքի ու Կոնդի միջև ընկնող տեղամասում, ոգտվելով խաւարից, սկսում է առանձին խմբերով ծածուկ թափանցել քաղաք և, կապ հաստատելով տեղական մաուդերիստների հետ՝ գրավում է քաղաքի ծայրամասում տակադիական նշանակութիւն ունեցող տները, ինչպէս նաև պետական ու ռազմական կարևոր նշանակութիւն ունեցող հիմնարկներին կից մի քանի տներ:

Հակառակորդի ընդհանուր ուժերի հրամատար զնդապետ Թարխանյանը յերեկոյան ուժեղացնում է տեղական Նավասարդյանի ջոկատը 100 հետևակով և 50

ձիավորով, ջոկատին խնդիր տալով Սեբաստի շրջանում վոչնչացնել կարմիրներին: Բայց խմբապետները Յերեվան եյին ձգտում թալանի համար: Նրանք հակառակ Թարխանյանի հրամանի՝ գիշերը անցնում են հարձակման: Փետրվարի 18-ի ժամի 2-ին հակառակորդը, դերազանց ուժերով ճնշելով կարմիրներին, կիպ մոտենում է Յերևանին ու Նորքին: Ժամի 4-ին կարմիրները սկսում են նահանջը:

Յիսիողկոմատի և կուսակցության Կենտկոմի շենքերին կից պահակները (մեկական դասակ) դրոհի անցնելով քաղաքի կենտրոնից դեպի արևմուտք են շարտում մաուդերիստների ջոկատին: Դաշակները ձգտում եյին շրջապատել 178-րդ դուռը: 178-րդ ուսական զնդի կոմունիստական ջոկատի և Յերևանի ջոկատի նահանջող դորամատները, բերդի կողմից շրջապատվելով սվինամարտի յեն նետվում, վորպեսզի դուրս գան շրջապատումից: Յերևանի փողոցներում 3-ժամյա մարտ մղելուց, մի շարք դրոհներից ու ձեռնամարտերից հետո հաջողվում է ճեղքել ճակատը և դուրս գալ կայարանը:

Դաշակների բանդան դեն շարտելով կարմիրներին և մտնելով քաղաքը, անցնում է թալանի և քաղաքում մնացած կոմունիստների վորսին: Բացակայում է վորեն հրամատարութիւն, վորովհետեւ խմբապետները իրենք առաջինը դիմեցին պահեստների ու հիմնարկների կողոպուտին: Գնդապետ Թարխանյանն իր բանդայի օրինակով, փետրվարի 18-ի լույսի 19-ի գիշերը, մոռացության տալով վոչ միայն կարմիրներին, այլ և իր ծրագիրն ու պլանները հարսանիք է անում: Դրանով նա ցույց է տալիս, վոր նրա համար, ինչպէս և բոլոր դաշակների համար անձնական շահերը վեր են ածեն ինչից:

Կարմիրների հրամատարութիւնը վերցնում ե իր հետ ամբողջ շարժական կազմը (60 մեքենա և 3 շոգե-
շարժ), դրանց թվում նաև 11 վադոն բեռնալորված պա-
րենով և հրանյութերով: Նա վադոնների վրա բառնում ե
նաև ըողոր հիմնարկութիւններն ու կայարանում յեղած
պարենի, հրանյութերի պաշարները կարմիր ջոկատի
հետ նահանջում Ղամարլու 1-ին հայկական բրիգադին
միանալու նպատակով: Կարմիրների ջոկատը բաղկա-
ցած եր 178-ըդ ռուսական զնդից, կոմունիստական ջո-
կատի մնացորդներից, Յերևանի դոմարտակից, «Աղա-
տամարտ» և «Մուսայելյան» զրահազնացքներից, 2
թեթև թնդանոթային և 2 հորիցային մարտկոցներից:

ՀԱՎԱՍՏԱՐՁԱՌՈՒՄ

Հակառակորդն արդեն հանդատացել եր Յերևանի
զրաւումով և գրաւված եր թալանով: Կարմիրների ջո-
կատն առանց դիմադրութեան հասնում ե Ղամարլու և
տեղափոխվում բնակարաններում, հակառակորդի կողմը
դիմադրութիւն ուղարկելով:

Ջոկատը Ղամարլու հասնելուն պէս՝ հրամատարու-
թիւնը կուսակցութեան Կենտկոմի և կառավարութեան
հետ միասին յեռանդուն միջոցներ ե ձեռք առնում զորա-
մասերը կարգի բերելու համար: Բանակի հրամատարը
մի հրաման և արձակում, վերի համաձայն Կոմկուսակ-
ցութեան ու Կոմյերիտմիտիւթեան բոլոր անդամներն ու
թեկնածուները կազմում են կոմունիստական ջոկատ,
վորի գլուխ ե կանգնում ընկ. Յանուշեանին: Այդ ջոկա-
տը, ինչպէս նաև նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր
առանձին կուսակցական ու կոմյերիտական քաղաքացիա-
կան կովի հետագա մարտերում ցուցահանում են հա-

տուկ դիմացկունութիւն ու տոկունութիւն: Նրանք
իրենց անձնական որինակով վրդեւորում ե իրենց հետե-
վից տանում են մյուս կարմիր բանակային մասային:
Կուսակցականների ու կոմյերիտականների ցուցահանած
տոկունութեան որինակն առանձնապէս կարևոր եր այն
պատճառով, վոր մեր զորամասերը գտնվում եյին կեն-
սամթերքի ու ռազմապաշարի ամենասուղ պայմաննե-
րում: Մեր զորամասնէրն ամենէին ապահովված չեյին
պարենով: Նահանջի ժամանակ մեզ հաջողվել եր մեզ
հետ վերցնել 8 վադոն ցորեն: 44 ուր շարունակ որական
պէտք եր կերակրել 6 հազար 700 մարդ: Բանակի հրա-
մատարի հրամանով սահմանվում ե պարենի բաշխման
նորմա շարային զորամասերի կարմիր բանակայիններին
ու հրամկազմին որական տրվում եր 1 և կէս գրվանքա
հաց և կէս գրվանքա միս (միսը զնվում եր տեղում):
Բանակի շտաբին ու թիկունքային հաստատութիւննե-
րին տրվում եր մեկ գրվանքա հաց ու կէս գրվանքա
միս: Հրամկազմի ու կարմիր բանակայինների ընտա-
նիքներին կէս գրվանքա հաց: Հիվանդներին ու
վիրավորներին որական մեկ և կէս գրվանքա հա-
ցից և կէս գրվանքա մսից բացի, տրվում եր նաև
թեյ՝ անդլիական խտացրած կաթով (չաքարի փոխա-
րեն): Ահա այս եր բանակի ամբողջ պարենավորումը.
այլ մթերքներ բանակը չեր ստանում: Սակայն այս
չափն ել մինչև վերջ պահպանելու հնարավորութիւն չի
լինում: Մարտի 15-ից շարային զորամասերի համար
հացը հասնում ե որական կէս գրվանքայի:

Բանակն ավելի լավ պայմաններում չեր գտնվում
հրանյութերի տեսակետից: Նահանջելիս մեզ հաջողվել
եր վերցնել 3 վադոն հրանյութեր, վորոնք բաւժվել եյին

Կարաքիլիսա ուղարկելու համար: Հենց նահանջի որից սուր պահանջ էր դրացվում Յ—դժանի հրացանների փամփուռաների: Յերբեմն փամփուռաների կարիքը ստիպում էր զորամասերին սվինամարտի նետակառու հա- կառակորդի դեմ: Յեվ ահա այսպիսի անտանելի ծանր պարադայում կարմիր զորամասերը կուտակեցուցվեցան դե- կավարությամբ համառորեն կռվում են թշնամու դեմ, տանելով իրար յետևից և մեկը մյուսից փայլուն հաղ- թանակներ:

Յերևանը թալանելուց և քաղաքում մնացած կո- մունիստների ընտանիքների հետ հաշիվը մաքրելուց հետո գնդապետ Թարխանյանը «Իր գործերն» ու զորա- մասերը կարգի յե բերում և հրաման արձակում փետր- վարի 19-ի լուսաբացին հարձակվել Աղբաշի վրա: Նա նպատակ ուներ կտրել Յերևան—Նախիջևան յերկա- թուղաղիծը և չրջապատել նահանջող զորամասերին: Սակայն այդ հարձակումը հաջողութուն չի ունենում և հակառակորդը յետ և չարտվում մեր զորամասերի կողմից ձեռք առած միջոցներով:

Ղամարլու—Աղբաշ չրջանում մնալը տակտիկական նկատառումներով ձեռնառու չէր կարմիրների համար: Բացի դրանից պարզվել էր, վոր հակառակորդը լեռ- ներով շարժվում և դեպի Շիրազլու կայարանը, ձեռ- տելով միանալ Դարարադաղում գործող Յապոնի բան- դայի հետ և չրջապատել մեզ Ուլիանորաշեն գյուղի կողմից և ապա վոչնչացնել: Նկատի ունենալով նաև այն հանդամանքը, վոր կարմիրների թիվունքում դուռ- նվում էր Բեյուք-Վեդիի բնական անտառիկ ամրոցը, բանակի հրամատարը վորոշում և թողնել Ղամարլուն և ամրանալ պաշտպանության կազմակերպման համար

տակտիկական տեսակետից ավելի ձեռնառու գծի վրա: Այդ նկատառումներով բանակի հրամատարը փետր- վարի 19-ին հրամայում է յետ քաշվել և պաշտպանու- թյան համար գրավել Խորվիրապ—Բեյուք-Վեդի—Կա- րաբեկլյառ գիծը: Շահթախտի—Արարատ կայարան- ներում գտնվում էր թյուրքական մի գունդ, վորի նպատակներն ու վերաբերմունքը դեպի կարմիր զորա- մասերը պարզված չէին:

Գնդապետ Թարխանյանը (դաշնակ բանդաների հը- րամատարը) կարմիր զորամասերին ջախջախված և դիմադրության համար անդոր էր համարում: Բայց մյուս կողմից նա նախատեսում է, վոր Վրաստանի խորհրդայնացումից հետո 11-րդ Կարմիր Բանակը ող- նության կհասնի հայկական բանակին: Այդ պատճա- րով նա վորոշում է հապճեպ կերպով նոր զորամասեր կազմակերպել: Հայտարարվում է պարտադիր զորա- հավաք: Այդ զորահավաքը կատարվում է ամենա- խայտառակ ձևով: Խմբապետները տներն ընկած, վոր- սի յեկած զայլերի պես, դուրս են հանում տներից բո- լոր տղամարդկանց: Նրանք հաշվի չեն առնում զորա- հավաքի յենթարկվողների վո՛չ կռվելու ընդունա- կությունը և վոչ ցանկությունը:

Փետրվարի 20-ից մինչև 24-ը դաշնակներին հա- ջողվում է իրենց ուժերը հասցնել մինչև 6 հազարի հե- տևակում և մի քանի հարյուր ձիավորի հեծեազորում ու 28 հրանոթի, վոր մնացել էր Կարմիր Բանակի նա- հանջից հետո: Դա կազմում էր Ղամարլվի ջոկատը, վորի հրամատարը նշանակված էր խմբապետ Սմբա- տը, իսկ շտաբի պետը՝ գնդապետ Կաֆիյեվը:

Հակառակորդի այդ ուժերի դեմ Կարմիր Բանակն ուներ 1 հազար 664 հոգի հետևակում, 11 հրանոթ, 64

գնդացի, 70 ձիավոր և 2 զրահապատ գնացք։ Այդ շարք որվա ընթացքում շնորհիվ կենտրոնական կոմիտե-
յի և բանակի հրամատարութեան ձեռք առած միջոց-
ների, կարմիր Բանակը հիմնովին կարգի յեր բերել
իր շարքերը։ Ձնայած նախընթաց անհամոզութեան,
պարենի ու հրանյութերի խիստ պակասութեան, զոր-
քերի բարոյական վիճակը, շնորհիվ քաղաքական մը-
շակման, գերազանց եր։ Ձորքերի տրամադրութիւնը,
այն դրութիւնը, վորի մեջ գտնվում էյին այդ զոր-
քերը, չընկալաւ լինելով հակառակորդի կողմից,
պարենի սահմանափակ քանակը, ինչպես նաև հակա-
ռակորդի պատսիվ զործողութիւնները համոզեցին բա-
նակի հրամատարին, վոր հասել և այն մոմէնտը,
յերբ կարելի յե պաշտպանութիւնից անցնել ակտիվ
զործողութիւնների։ Հարձակումը մեղ համար ան-
հրաժեշտ եր հետևյալ պատճառներով. անհրաժեշտ եր
նախաձեռնութիւնը մեր ձեռքը վերցնել, ցույց տալ
բնակչութեան ու գերի ընկած կարմիր բանակայիննե-
րին, վոր կարմիրները ջախջախւած չեն, և գրանույ
խանդարել դաշնակցական բանակի զորահովաքին ու
կազմակերպմանը։

Փետրվարի 23-ին հրաձգային բրիգադի շտաբում
բանակի շտաբի պետ և շտաբում կուսակցութեան
կենտրոնի լիազոր Ալեքսանդրովի նախադահուլթյամբ
գումարվում և զորամասերի ու կոմիտարների խորհր-
դակցութիւն հարձակման անցնելու համար գնդերի
օլտորաստ լինելու մասին։ 3-րդ ու 178-րդ գնդերի և
կոմունիստական ջոկատի հրամատարները, գտնե-
լով, վոր զորամասերը մարտունակ են և քաղաքակա-
նայեւ պատրաստված, հարձակումը համարում են հը-

նարավոր։ Այդ խորհրդակցութիւնից հետո բանակի
հրամատարը վճռում և անցնել հարձակման։

Փետրվարի 25-ին 2-րդ գուման անցնում և հար-
ձակման և ստանց առանձին դիմադրութեան հանդի-
պելու հակառակորդի կողմից՝ դրավում և Մասումլու-
թադա—Գարդալու գյուղերը և շարունակում և շարժ-
վել դեպի Աղդաշ։ Հակառակորդն ուժեղ ոժանդակ ստա-
նալով սկսում և նեղել մեր զորամասերին դեպի Դվին—
Գյուրդեքենդ։ Մարտը տևում և ամբողջ որը, բայց Աղ-
դաշը վերցնել չի հաջողվում, վորովհետև հակառա-
կորդը յերեք անգամ ավելի ուժեր և գուրս բերում մե-
րոնց դէմ։

Նույն որը 3-րդ գումանը կենտրոնանում և կարալա-
րի պոստի մոտ և ոգտվելով դիշերային խավարից ու
տեղանքից, գումանը հասցնում և Յուվայի այգիները և
Ժամի 3 և կիսին տեղավորում և նրան խճուղու յերկու
կողմերում, հակառակորդի պահակային պահպանու-
թիւնից 200—300 քայլի վրա։ Գնդի զորամասերը
մարտակարգի բերելուց հետո և դեպի առաջ և դեպի
թեքերը հետախուզութիւն կազմակերպելով, կարգա-
դրութիւն և ստանում գնդի հրամանատարից առանց
կրակոցի խորհել հակառակորդին Յուվայի այգիներում
և դրալել Յուվա—Ղամարլուն սկսել յեռանդուն հետա-
պնդում։ Գումանը հնարավորութիւն չպետք և տար
հանկարծակիի յեկած հակառակորդին սթափվել և կազ-
մակերպվել հետագա դիմադրութեան համար։ Հանկար-
ծակիի յեկած հակառակորդն անկարգ և առանց կանգ
առնելու փախչում և մինչև Աղհամդալու գյուղը։ Վրա
յին հասնում հակառակորդի ոժանդակները։ Դրանց
դէմ յերկու Ժամ մարտ մղելուց հետո կարմիր զորա-
մասերը Ժամի 14-ից 30 քայլ անց դրավում են Աղ-

համգալուն, հակառակորդին յետ չպրտելով Թաղա-
գյուղ:

Հակառակորդը թողնում ե 2 գնդացի, մի հրանոթ,
չատ մարտանյութեր և դերիններ:

Այլ զորասյունը, հանդիպելով հակառակորդի ուժեղ
հարձակմանը, չի կարողանում իրագործել իր վրա
դրած խնդիրը, այն ե՝ փետրվարի 25-ին գրավել Աղ-
բաշ—Թաղա—Դարդալու—Արտաշատ գյուղերը:

Նկատի ունենալով, վոր ալ զորասյունը չի իրա-
գործել խնդիրը, վոր հակառակորդը կարող ե Դվին—
Քյուրքենդի կողմից հարձակվել մեր թիկունքին, վոր
մի ամբողջ որ մարտ մղելով 30 վերստ ճամբա կտրած
ձախ զորասյունի զորամասերը հոգնած են, բանակի
հրամանատարը փետրվարի 25-ին հրամայում ե զորա-
մասերին հանդիստ տալու նպատակով դադարեցնել
հարձակումը և հակառակորդի կողմը պահակային
պահպանություն սահմանել:

Փետրվարի 26-ին հակառակորդն ամբողջ որը ու-
ժեղ դիմադրություն ե ցույց տալիս վողջ ճակատի
վրա, մի քանի անգամ անցնելով հակադրոհի:

Այլ զորասյունը 178-րդ ուսական գնդից 2 վաշտ ո-
ժանդակ ստանալով, համառ մարտերից հետո գրավում
ե Աղբաշը: Զրահագնացքներն այդ ժամանակամիջո-
ցում, սարքելով ճանապարհը, դուրս են գալիս Ուլու-
խանլու դիժը: Հակառակորդը գերազանց ուժեղով ու-
ժեղ դիմադրություն ե ցույց տալիս ձախ զորասյունի
տեղամասում: Նա մի քանի անգամ հակադրոհի յե
անցնում: Միաժամանակ նա մեծ ուժեր ե խմբավորում
(հատկապես ձիավորներ թվով 400 հոգի) Աղբաշի շըր-
ջանում: Խափարն իջնելուն պես հակառակորդը վճռա-
կան հարձակման ե անցնում մեր ալ թևում և իր

ձիավորներով չըջանցելով մեր ալ թևը, միա-
ժամանակ գրոհում ե Աղբաշը հյուսիս-արև-
մուտքից: Մեր զորամասերը չըխմանալով հա-
կառակորդի գերազանց ուժերի ճնշմանը, թող-
նում են Աղբաշը և նահանջում իփակլու: Այդ նա-
հանջի ժամանակ սպանվում ե 2-րդ հայկական հրա-
ձիգ գնդի հրամանատար ընկ. Յիշելեիչը:

Փետրվարի 27-ին 178-րդ գունդը 2-րդ հրաձիգ
գնդից մնացած մասերի հետ Բիասին անցնում ե հալ-
ձակման և գրավում ե Աղբաշ, յետ մղելով թշնա-
մուն:

Ձախ տեղամասի ճակատում փետրվարի 27-ին ամ-
բողջ որն ուժեղ մարտ ե տեղի ունենում վճռական դի-
մադրություն ցույց տվող հակառակորդի գերազանց
ուժերի դեմ: Մի շարք յետադադին գրոհներից հետո
3-րդ հայկական գնդի և կոմունիստական ջոկատի զո-
րամասերը զրահագնացքներ և 3 հրանոթի աջակցու-
թյամբ հակառակորդին չարում են Թաղա-գյուղից և
Ուլուխանլուից և գրավում այդ կետերը: Միևնույն
ժամանակ նրանք սկսում են հուսիս-արևելքից չըջան-
ցել Նորադավիթը: Հակառակորդը յետ ե քաշվում Նո-
րադավիթից և ամրանում Նորադավիթի հյուսիսային
ծայրում գտնվող այգիներում:

Փետրվարի 28-ին մեր զորամասերը հարձակման են
անցնում ամբողջ ճակատի վրա: Նրանց նպատակն եր
գրավել Յերեանը: Չնայած հակառակորդի ուժեղ դի-
մադրության, 3-րդ հրաձիգին գունդը դեն չպրտելով
նրան Շենդավիթից, ամբացւով Յերեան կայարանից
մեկ կիլոմետր դեպի հյուսիս-արևելք և գերեզմանոցից
դեպի հարավ գտնվող բարձունքների վրա և գրավեց
Չորբախի այգիները:

Այլ թեւում 2-րդ հրաձիգ գունդը, չդիմանալով հա-
կառակորդի ճնշմանը, նահանջում ե իսկաբնու, մաքրե-
լով Աղբաշը: Բայց զինքի հրամատարու թյունն ընդու-
նած զինքի ռազմկում ընկ: Տեղ-Մոգչիսյանի յետանկուն
գործողութեան չնորհիվ, դռնդը նորից անցնում ե
զրոհի ե ժամի 18-ին նորից գրավում Աղբաշը:

Փետրվարի 28-ից կապ չունենալով 2-րդ զնդի
հետ ե վախենալով կորվել Աղբաշ—Իմանչարույի կող-
մից, ձախ մարտական տեղամասի պետը բրիգադի հրա-
մատարից հրաման ե ստանում ե զրահադնացքի պաշտ-
պանութեան տակ նահանջում ե իմանչարու—Բաղում-
լու: Նահանջը կատարելով լիակատար կարգով, զո-
րամասերն ամրանում են Աղբաշ—Իմանչարու—Բա-
ղումլու գծի վրա:

Դրա հետ միաժամանակ Դարալագյազի ճակատում
հակառակորդ մարտի 1-ին փորձում ե գրավել Յու-
խարի—Տանձիքը, բայց յետ ե չգրավում տեղական
(թուրք) բնակչութեան կողմից ե Դարալագյազը խմ-
բապետ Յապոնի կողմից գրավելու ժամանակ այստե-
ղից փախած կոմունիստներից կազմված ջոկատից, վորը
հաշվում եր 19 հոգի:

Բանակի շտաբում յենթադրում են, թե հնարավոր
ե, վոր հակառակորդը Դարալագյազի կողմից հար-
ձակիլի Բաշնորաշենի վրա, նպատակ ունենալով կորել
մեզ պարեն հասցնելու ե հնարավոր նահաջի միակ ճա-
նապարհը (Շահթախտի—Նախիջևան), վորտեղ դրա-
նովում եր 11-րդ բանակի 180-րդ գունդը: Այդպիսով
հակառակորդին կհաջողվեր շրջապատել մեզ ե վոջն-
չացնել:

Հաշվի առնելով Դարալագյազի կողմից մեզ սպառ-
նացող վտանգը, հրամատարությունը կզտակցութեան

Կենտրոնի ե կառավարութեան հետ վճռում ե դիմել
ընկեր Աբաս-Կուլի-բեկին, խնդրելով իր հրամատարու-
թեամբ մի ջոկատ կազմակերպել կոմկոտին ե խորհր-
դային իշխանութեանը համակրող Նախիջևանի թուրք
բնակչութեանից ե ապահովել բանակը Դարալագյազի
կողմից:

Ընկ. Աբաս-Կուլի-բեկը հայանի յեր, վորպես
ժողովրդական հերոս, Բեյուք-Վեդիի տակ դաշնակնեբի
դրքերի գեմ մղած մարտերում հատկապես 1919 թվին:
Նա ուրախութեամբ ընդունում ե հրամատարութեան ա-
ռաջարկը: Ջոկատի կազմակերպումն ընթանում ե շատ
հաջող ե մարտի 1-ին ջոկատը «Կարմիր տարոր» (չու-
մարտակ) 400 հոգի կազմով ընկ: Աբաս-Կուլի-բեկի
հրամատարութեամբ գրավում ե դիրքերը ե գրանով
ապահովում բանակը հյուսիսից ե հարավ—ամեմուտքից
չրջապատելուց:

Հակառակորդը մեծ ուժեր կենտրոնացնելով Աղ-
բաշի շրջանում, մարտի 1-ին 2-րդ զնդի տեղամասում
անցավ հարձակման: 2-րդ գունդը, չդիմանալով հա-
կառակորդի զերազանց ուժերի ճնշմանը, յետ քաշվեց
Իսիակլու—Վ. Ղոյլասար:

Պարզելով հակառակորդի ուժերը, բանակի հրա-
մատարը վճռում ե անցնել պաշտպանութեան, վորի
համար հրամայում ե 1-ին հրաձիգ բրիգադի հրա-
մատարին յետ քաշվել ե մարտի 2-ին գրավել Կարա-
բեկլյառ—Բեյուք-Վեդի—Սորովիրապ բնադիծը:

Բնադիծը պաշտպանութեան համար գրավելուց ե
բանակի զորամասերը կարգի բերելուց հետո զորքերը
ստանում են հետեյալ հրամանը:

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԽՍՀ տերիտորիայում գործող գործերին

Ավլար գյուղ
Զորքերի շտաբ

2 մարտի 1921 թ.
15 ժամ 30 րոպե

Հնգորյա համառ մարտերի ընթացքում ՀՍԽՀ տերիտորիայում գործող, իմ խնամքին հանձնված զորամասերը, հաղթահարելով արհեստական և բնական խոչընդոտները, կրելով մեծ կորուստներ, մի շարք հաղթանակներ են ձեռք բերել հակառակորդի նրկատամբ, հակառակորդ, վոր դերազանցում եր քանակով և հեծելազորի գերակշռող քանակությամբ:

Առանձին ընկերների հերոսությունը, նրանց ձգտումը դեպի առաջ, դեպի հաղթանակ, և իմ խնամքին հանձնված զորամասերի հավատը մոտ ապագայում վերջնական հաղթանակ ձեռք բերելու համար, զորամասերին մղում եր մի հաղթանակից դեպի մյուսը և միայն յերկու կողմից կատարված խորը շրջանացումն ստիպեց մեզ յետ քաշվել և նորից տակտիկական տեսակետից ավելի ձեռնաուղիքներ գրավել:

Իմ խնամքին հանձնված զորամասերի ամբողջ հրամատարական, կոմիսարական և կարմիր-բանակային կազմին ծառայության անունից հայտնում եմ շնորհակալություն:

Յես հավատացած եմ, վոր հետագայում ևս զորամասերը նույնպես պետք և քաջաբար մարտնչեն, բարձր պահելով պրոլետարական միջազգային հեղա-

փոխություն դրոշը և կարմիր բանակայինի կոչումը, թի բան, վոր նրանք ցույց տվին փետրվարի 24-ից մինչև մարտի 1-ի մարտերում:

Զորամասերի հրամատարներին այժմ իսկ ներկայացնել ինձ առավել աչքի ընկած ընկերների ցուցակը նրանց կատարած սխրագործությունների մանրամասն նկարագրությամբ՝ արժանի պարգևատրման համար:

Զորամասերի բոլոր հրամատարներին ու կոմիսարներին, չկորցնելով վոչ մի րոպե, յեռանդուն դբաղվել զորամասերը լիկատար կարգի բերելու աշխատանքով, վորպեսզի մոտ ապագայում զորամասերը կարողանան հաղթական հարձակում կատարել, ինչպես կատարել են անցած մարտերի ընթացքում:

Հրամանը գործադրության մեջ դնել հեռագրով և ընթերցել այն բոլոր դնդերում, վաշտերում, մարտկոցներում, կոմանդներում և առանձին ջոկատներում:

ՀՍԽՀ տերիտորիայում գործող զորքերի

հրամանատար՝ ՄԱԼԿԱՉԱՆՈՎ

Զորքերի ռազմական կոմիսար՝ ՍՎԻՐԻԴՈՎ

Շտաբի պետ՝ ՊՐԻՏՈՄԱՆՈՎ

Մարտի 8-ին հակառակորդը հարձակման ե անցնում Գիշուկ-Վեդի-Սորվիբապի վրա: Սակայն շնորհիվ մեր զորամասերի յեռանդուն գործողությունների հարձակումը յետ ե մղվում, իսկ հակառակորդը փախուստի յե դիմում: Մեր զորամասերը շարունակում են հետապնդումը ե ժամի 17-ին դրավում են Բողբուլուն սարի հարավային ե հարավ-արևմտյան լանջերը:

Մարտի 8-ին հակառակորդն ամբողջ ճակատում թողնում ե մոտ 100 հոգի սպանված ե շատ վիրավորներ, 2 զնդացի, 15 գերի, 40 հրացան, 7 ձի ե 70 զնդացրային լցրած ժապավեն: Միայն 3-րդ զնդի տեղամասում Դարդավի ճահիճներում հակառակորդը թողել եր 80 սպանված, շատերն ել փորձել եյին անցնել Արաքս գետը, սակայն խեղդվել եյին:

Մարտի 8-ին մեր կողմից սպանվել են 4 հոգի, վիրավորվել են 10-ը, գերի ընկել 2-ը:

Սակայն այդ մարտում մենք ունենում ենք մի շատ ծանր կորուստ. այդ որը մահացու վերք ե ստանում բրիգադի կոմիսար ընկեր Լիպարիտ Մխչյանը:

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՐՏՈՒ- ԹՅՈՒՆԸ

Մարտի 8-ին բանակի կապի պետին հաջողվում ե Արարատ կայարանում ընկած ավտոմոբիլային ռադիոկայանը սարքի բերել ե Դիլիջանի վրայով կապ հաստատել Բազմի ե Թիֆլիսի հետ: Ռադիոյի միջոցով ստացած տեղեկությունները հաղորդում եյին, թե

մարտի 9-ին Ղարաքիլիսայից ե Դիլիջանից դուրս յեկած 11-րդ բանակի Յերևանի խմբակը հյուսիսից հարձակվում ե Յերևանի վրա, նպատակ ունենալով մարտի 13-ին դրավել Յերևանը: Ղամարվի ճակատում միաժամանակ հարձակում սկսելու նպատակով Հայաստանի կարմիր զորքերի հրամատարը հրամայում ե զորամասերին մարտի 11-ին հարձակման անցնել այն հաշվով, վորպեսզի մարտի 13-ին Յերևանի խմբակի հետ միասին դրավեն Յերևան քաղաքը:

Ռադիոյով տեղեկություններ ստանալով, վոր Յերևանի խմբակն ուժեղ ցրտերի ե խոր ձյան պատճառով ստիպված ե ժամանակավորապես մնալ Ներքին-Ախտայի շրջանում, այլև հաշվի առնելով պարենի ե հրանյութերի պակասությունը, հրամատարությունն անհրաժեշտ ե համաճում փոխել մարտի 11-ի հարձակումը ե նշանակել 14-ին:

Մարտի 12-ին ռադիոն հաղորդում ե, վոր 11-րդ կարմիր բանակի Յերևանի խմբակը (ուսական զորամասեր) մարտի 11-ին Ներքին Ախտայի շրջանից հարձակման ե անցել Յերևանի վրա, իսկ մարտի 12-ին Յերևանի խմբակի աջ թևն անցել ե Մոլիտակ քերձը ե հարձակվում ե Բաշարարանի վրա: Հայկական բանակի հրամատարը գտնելով, վոր Յերևանի խմբակը մարտի 13-ին իր աջ թևով կհասնի Աշտարակին, իսկ ձախ թևով Գանաքեռին, հրամայում ե զորքերին մարտի 14-ին վճռական հարձակման անցնել Յերևանի վրա ե դրանով թեթևացնել Յերևանի խմբակի գործողությունները:

Մարտի 13-ին, 14-ին Յերևանի խմբակի հրամատարին մի քանի անգամ դիմումներ են արվում, բայց

և այնպես չի հաջողվում պարզել, թե ինչ գրութիւնն է տիրում Յերեանի ճակատում: Զի հաջողվում նաև պարզել, թե ինչ կետեր ե դրալել այդ խմբակը: Վոր պեսզի իր գործողութիւնները համաձայնեցնի Յերեանի խմբակի գործողութիւններին, բանակի հրամատարը հրամայում ե հայկական կարմիր բանակի զորամասերին դադարեցնել հարձակումը ե ամրանալ ձեռք բերած կետերում՝ մինչև կվերականգնի կապը Յերեանի խմբակի հետ:

Դրա հետ միաժամանակ հրամայվում ե զրահադնացիների պետին անմիջապես դիմել Ղամարլվից մինչև Ուլուխանլու գիծը կարգի բերելու գործին, վորից հետո զրահադնացիները պետք ե առաջ քաշվեյին բանակի ձախ թևն ապահովելու նպատակով:

Մարտի 14-ի լույս 15-ի դիշերվա ընթացքում ե 15-ի ցերեկը հակառակորդը ճակատում մեծ ուժեր ե կենտրոնացնում, հանելով Յերեանում ունեցած իր ոժանդակները:

Մարտի 15-ին հակառակորդը մեր աջ թևում վրճողական հարձակման ե անցնում: Նրա նպատակն ե՝ դրալել Աղբաշ-իփակլուն, Ղարհամզալուն, անցնել ձախ զորասյունի թիկունքը ե կտրել կարմիրների նահանջի ճանապարհը: Բայց հակառակորդը յետ ե յրպրտվում մեր զորամասերի յեռանդուն հարձակումով:

Նույն օրը ժամի 13-ին 3-րդ հրաձիգ դնդի վաշտը մարտկոցների կրակի պաշտպանության տակ անցնում ե հարձակման ե արևմուտքից գրոհելով Ղարաթլու գուղը դրալում ե այն:

Մարտի 16-ին հակառակորդը մոտ մի վաշտ հետևակի ե 150 ձիավորի ուժով հարձակման ե անց-

նում Աղբաշի վրա: Բայց 2-րդ քնդի հակադրոհով յետ ե չպրտվում Գյառնիչայ գետի մոտերը: Ժամի 15-ին հակառակորդը մոտ մի դումարտակ հետևակի ե 100 ձիավորի ուժով կրկին հարձակվում ե Վ.Աղբաշի վրա, բայց մեր հրետանու յեռանդուն գործողությամբ չպրտվում ե դեպի հյուսիս-արևմուտք:

Աջ թևում հաջողութիւն չունենալով՝ հակառակորդը մեծ ուժերով հարձակման ե անցնում 3-րդ հրաձիգային դնդի ճակատում, բայց 3-րդ դնդի հակահարձակումով յետ ե չպրտվում: Այստեղ հակառակորդից դրալում են 2 հրանոթ, 300 արկ, զանազան սրտեմաների 70 հազար փամփուշտ ե «Վիկկերոս» ու «Մաքսիմ» գնդացիների 700 լցրած ժապավին:

Մարտի 17-ին հակառակորդը Յերեանից ուժեղ ոժանդակներ ստանալով, ամբողջ ճակատի վրա անցնում ե վճռական հարձակման ե կարճատև մարտից հետո կոմունիստական ջոկատին յետ ե չպրտում իփակլու: Ոժանդակում գտնվող 3-րդ դնդի դումարտակը հարձակվում ե Ղարաղալի վրա ե նրանից դեպի ավելի արևելք իփակլվից հյուսիս-արևմուտքում գտնվող հակառակորդի թիկունքն անցնելու նպատակով: Գոմարտակը դրալում ե Ղարաղլուն ե հակառակորդին յետ չպրտում Աղհամզալվից 5 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք: Միաժամանակ 3-րդ դնդի 3-րդ դումարտակը հարձակվելով Ուարաթլի վրա, հակառակորդին չպրտում ե Ուլուխանլու:

Իփակլվի շրջանում գտնվող հակառակորդը շրջապատելուց վախենալով ակտում ե անկարգ նահանջել: Բայց չնայած դրան կարմիր զորամասերը չեն կարողանում հետապնդել հակառակորդին մարտանյութերի

պակասութեան պատճառով: Մեղանում հատկապես
օտար կարիք եր պաշտօնում ռուսական 3 դժանի հրա-
ցաններէ փամփուշտներէ: Այսպէս որինակ մարտի
17-ին 3-րդ դնդի հրամատարը 20 հազար փամփուշտի
պահանջ ե ներկայացնում: Նրա այդ պահանջին բաց ե
թողնվում ընդամենը մի հազար 200 փամփուշտ: Գըն-
դում կար 300 ռուսական հրացան (մնացածները «Լե-
բեք» ե «Ռոսսե» սխտեմի եյին): Այդպիսով ամեն մի
հրացանի տրված ե ընդամենը 4 հատ փամփուշտ:

Մարտի 17-ին Ուլուխանլիկ մեր կողմն անցավ
4-րդ հայկական դնդի գումարտակն իր ամբողջ սպա-
ռազինութեամբ:

Նկատի ունենալով հակառակորդի հարձակողական
մտադրութիւնը, նրա օպառազինված լինելն ու ու-
ժերի գերազանցութիւնը, բանակի հրամատարը հրա-
մայում ե դաշարեցնել հարձակումը ե ամբապնդվել
դրաված դիրքերում, մինչև կարգովի դրութիւնը
հասնիսային ճակատում: 11-րդ բանակի Յերեանի խմ-
բակի գործողութիւնների մասին դարձյալ վոչ մի տե-
ղեկութիւն չկար:

Հակառակորդը նախադգալով Յերեանի խմ-
բակի մոտակա հարձակումը, վճռում ե իր բոլոր ու-
ժերն ուղղել Ղամարլիի ճակատը: Նրա նպատակն եր
ապահովել նահանջի ճանապարհը Յերեանից դեպի Դա-
րալաղյաղ: Դրա համար դենք կրելու ընդունակ ամբողջ
թնակչութեան գորահավաք ե հայտարարում (մինչև 60
տարեկանը): Բացի դրանից նա ուժերի մի մասը Յե-
րեանից դեպի ճակատից տեղափոխում ե Ղամարլիի ճա-
կատը:

Մարտի 18-ին դաշնակցական բանակի հրամա-

տար զնդապետ Թարխանյանը Ղամարլիի ճակատի
դիրքերին հետևյալ հրամանն ե տալիս.

«Համարյա մի ամիս տևող անընդհատ մար-
տերից հետո կարմիրները քանակով նվազել են:
Պարեն ե հրանցութեւր չկան:

Պարենի բացակայութեան հողի վրա ուժեղ ան-
բավականութիւն ե նկատվում զինվորների մեջ:
Ռուսները չեն ցանկանում մեռնել Հայաստանի
դաշտերում: Նրանք հրաժարվում են մեր դեմ
պատերազմել: Յերեանից դեպի ճակատի դրութիւնը
պահանջում ե անմիջապէս լիկվիդացիայի յենթա-
կել կարմիրներին Ղամարլիի ճակատում: Անհրա-
ժեշտ ե կապ հաստատել Յապոնի խմբակի հետ:
Անհրաժեշտ ե մաքրել մեր թիկունքը հայկական
բանակից, վորպէսզի հնարավորութիւն ունենանք
բոլոր ուժերը տեղափոխել Յերեանի ճակատը:

Հրամայում եմ.—Մարտի 17-ին անցնել հար-
ձակման ե 2 որվա ընթացքում կարմիրներին լի-
կվիդացիայի յենթաբակել Ղամարլիի ճակատում»:

Մարտի 19-ին հակառակորդն ամբողջ ճակատով
հարձակման ե անցնում:

2-րդ դունդը, չդիմանալով, հակառակորդի դե-
րազանց ուժերի ճնշման տակ թողնում ե Աղբաշը ե
սկսում ե նահանջել: Այդպիսով մերկացվում ե կոմու-
նիստական ջոկատի ձախ թելը: Կոմունիստական ջո-
կատի հրամատար ընկ. Յունաչևսկին, վախենալով, վոր
հակառակորդն իր թիկունքը կանցնի աջից, հրա-
մայում ե ջոկատին յետ քաշվել Դոխկուղ: Իմանչալից
առաջ են քաշվում 3-րդ դնդի յերկու վաշտը գումար-
տակի հրամատար ընկ. Թերեքանովի հրամատար

Թյամբ: Այդ վաշտերը յերեք անգամ հարձակման են գլխում և վերջը ձեռնամարտից հետո հաջողվում է նորից գրավել Իփակլու-Աղբաշը:

Հակառակորդը, նոր ոժանդակ ուժեր ստանալով, անցնում է հարձակման և 2-րդ հրաձիգ գնդին ու կոմունիստական ջոկատին իրենց գրաված դիրքերից դուրս չալրտելով դեպի Գյառնիչայ գետի վրա գրտնվող յերկաթուղադժի կամուրջը, ձգտում է գրավել այն: 3-րդ գնդի տեղամասում հակառակորդը գերազանց ուժերով մի քանի անգամ գրոհում է Խարաթլուն, սակայն անհետևանք: Ժամի 13-ին հակառակորդին հաջողվում է յետ չալրտել 3-րդ գնդի ձախ թեւը, սակայն գնդի ստացած ոժանդակները վերականգնում են դրուժյունը: 3-րդ գնդի ձախ թևում գործող «Մուսայեյյան» զրահազնացքը կիպ մոտենում է հակառակորդին: Այն մոմենտին, յերբ գնդի մասերն անցնում են գրոհի, նա սկսում է 200 քայլ տարածության վրա գնդացրային ուժեղ կրակով գնդակոծել հակառակորդին:

Հակառակորդը չդիմանալով 3-րդ գնդի հակադրոհին, վորն ոժանդակվում եր զրահազնացքի և 178-րդ գնդի դումարտակից, փախուստի յե մատնվում, թողնելով մինչև 130 հոգի սպանված ու վիրավոր:

Այսպիսով մի կողմից՝ խոր ձյան և ցրտերի պատճառով 11-րդ բանակի զորամասերը կանգ առնելով Ախտայի շրջանում հետաձգել էին առաջխաղացումը դեպի Յերեան: Մյուս կողմից՝ հայկական կարմիր զորամասերը չունեյին բավարար քանակությամբ պարեն և հրանյութեր: Նկատի ունենալով այս հանդամանքը, հայկական Կարմիր բանակի հրամատարությունը վճռում է

համաձայնեցրած գործողություններ կատարելու նպատակով դադարեցնել հարձակումը մի առ ժամանակ մինչև վոր կվերականգնվեր կապը 11-րդ բանակի զորամասերի հետ: Այդ առթիվ կարգադրվում է գործերին յետ քաշվել և նորից գրավել հին դիժը: Հին դիրքերն անցնելուց հետո բանակի հրամատարը վճռում է անցնել սլաշտպանության:

Մարտի 22-ին հակառակորդը հարձակման է անցնում Քյուլչուկ-Վեդի—Խորվիրայ ճակատում և դուրս վանելով 3-րդ հայկական գնդի դումարտակը, գրավում է Խորվիրայը:

Շիրազլիից առաջ է քաշվում 3-րդ հրաձիգ գնդի դումարտակը: Նա հարձակվում է Դարղալիի վրա և 2 ժամյա մարտից հետո դուրս է գալիս հակառակորդի թիկունքը: Հակառակորդը շրջապատված զգալով իրեն, անկարգ նահանջում է Դարղալու, թողնելով 2 գնդացի, 94 հրացան, 10 հազար փամփուշտ, գնդացրի 106 լցրած ժապավեն և մոտ 150 սպանված ու վիրավոր:

Միաժամանակ հակառակորդը հարձակման է անցնում Ն.-Չանախչի—Յելիինի տեղամասում: Նրա նպատակն եր կապ հաստատել Յապոնի ջոկատի հետ և միացյալ ուժերով հարձակվել Բաշնորաչենի վրա, կտրել կարմիրների հաղորդակցության կապը Նախչևվանի հետ:

«Կարմիր Տաբոր»-ի հակահարձակումով հակառակորդը յետ է չալրտվում Զընդուլու—Յելիին:

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՎԱՌՆԱԿՈՎ ՅԵՎ ՅԵՐԵՎԱՆԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Հայկական Կարմիր Բանակի հրամատարությունը հայտնել եր ռադիոյով XI Կարմիր Բանակի շտաբին

իր ծանր դրութեան մասին, պարենի պակասութեան մասին: Ռադիոյով պատասխան եւ օտացում, վոր սաւառնակով ոգնութեան ցույց կտրվի թշնամիներով շրջապատված Կարմիր զորամասերին: Այդ լուրը կայծակի արագութեամբ տարածվում եւ Կարմիր բանակայիններին մեջ: Նրանք նոր վոգի ու շունչ են առնում: Սավառնակով յեղբայրական հզոր Կարմիր բանակից ոգնութեան ստանալու փաստն անգամ բավական եր խոշոր բարոյական ազդեցութեան գործելու եւ բարձրացնելու յերկարատե զրկանքներ կրող մարտիկներին տրամադրութեանը:

Լուրն ստանալուն պէս Կարմիր բանակայիններն սկսում են անընդհատ դիտել յերկինքը: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում եւ ինքն առաջինը նկատել ոգնութեան հասնող սավառնակին, ինքն առաջինն ավետել ուրախ լուրը: Սակայն ոգնութեանն ուշանում եւ: Անցնում եւ մեկ, յերկու որ, ջինջ կապուտակ յերկնքի վրա չի նշկատվում պողպատե թռչունը, չի լսվի նրա մատորի դռուցը: Կարմիր բանակայինների համբերութեանը հատնում եւ: Նրանք սկսում են ծիծաղել ուշացող սավառնակի վրա:

Մարտի 25-ի կեսօրին մոտ եր: Հեռու հորիզոնի վրա նշմարվում եւ մի հագիվ նկատելի կետ: Կետը քանի գնում այնքան մեծանում եւ:

—Սավառնակը, սավառնակը—դռնում են ուրախացած Կարմիր բանակայինները:

Անցնում եւ տաշնապալ լի մի քանի բոպե: Ահա պարզ սկսում եւ հնչել մատորի ձայնը:

Սավառնակը վերջին պտույտներն եւ գործում մեր գիրքերի վրա եւ հաջողութեամբ իջնում մեր կողմում:

Նա ի հետ բերել եր վոսկի, վորով մենք հետադարձ գնումներ ենք կատարում Պարսկաստանում ու Նախիջևանում եւ այդպիսով մասամբ վերացնում պարենի ճշնափամը: Բայց նյութական ոգնութեանից շատ ավելի մեծ եր նրա բարոյական ազդեցութեանը:

Դաշնակցական բանակի հրամատարը, հաշվի առնելով կարմիրներին հյուսիսային խմբակի կողմից սպառնացող վտանգը, վճռում եւ մարտի 25-ի լուսարացին վճռական հարձակման անցնել Բեռլին-Ջըն-Ջոլու-Արփա ճակատի վրա: Նրա նպատակն եր՝ կարմիրներին այդ ճակատում լիկվիդացիայի յենթարկել, Յապոնի հետ կապ հաստատել եւ Դարալադյազ նահանջելու համար ապահովել թիկունքը:

Հյուսիսային ճակատում ուսական զորամասերի արագ առաջխաղացումը ստիպում եւ Թարխանյանին հրաժարվել այդ հարձակումից: Մենչևիկյան Վրաստանն ամբողջապէս խորհրդայնացնելուց հետո XI Կարմիր Բանակի հրամատարը վորոշում եւ վճռական հարձակման անցնել Հյուսիսային ճակատում եւ աջակցել Հայկական Կարմիր Բանակի գործողութեաններին:

Մարտի 25-ին Հյուսիսային խմբակը 54-րդ, 60-րդ հետևակային բրիգադներին, 18-րդ եւ 20-րդ հեծյալ գնդերին եւ Դիլիջանի, Ղարաքիլիսայի ու Նոր-Բայազետի զավառի կոմունիստներին կազմված կոմունիստական ջոկատի կազմով ոպերատիվ դժով յենթարկված 20-րդ դիվիզիայի հրամատար ընկ. Վելիկանովին՝ անցնում եւ հարձակման ամբողջ ճակատի վրա:

Գնդապետ Թարխանյանը տեսնում եւ, վոր դաշնակցական բանակն անկարող եւ դիմադրելու հյուսիսային խմբակին: Նա հաշվի յե առնում թիկունքից սպառ-

նացող Հայկական Կարմիր Բանակի վտանգը: Հյուսիսային ճակատում մարտի 31-ի մարտում կրած պարտությունից հետո նա նահանջում է Դարալագյազ:

Հակառակորդի նահանջող զորքերը և բնակչությունը մինչև 10 հազար հետևակ և 1 հազար ձիավորի ուժով ապրիլի 1-ին անցնում է հարձակման Բեռլ-Վեդիի վրա: Նրանց նպատակն էր ապահովել դաշնակներին նահանջը դեպի Դարալագյազ: Սակայն դաշնակներին չի հաջողվում գրավել Բեռլ-Վեդին: 2-րդ Հայկական դեդի մի վաշտը հարձակման է անցնում և հակառակորդի համար աննկատելի կերպով, ոգտվելով տեղանքից, դուրս է գալիս հակառակորդի թիկունքը: Այդ վաշտն իր կրակով ստիպում է հակառակորդին նահանջել Բաշգյառնի, թողնելով մոտ 20 յերկանիվ բարձած փամփուռներով և յերթային 5 խուհանոց:

Ապրիլի 2-ին, յերբ կողմերի միջև թեթև հրաձգություն էր տեղի ունենում, դեպի կարմիրների հրամարտությունը շնչակտուր վաղում է հերթապահ հեռախոսակր ուղիով-կայանից: Նրա այլալված դեմքը, բոցավառվող խենթ աչքերը զարմանք ու տարակուսանք են պատճառում տեսնողին: Իզուր են աշխատում կանգնեցնել նրան կարմիր բանակայինները, իզուր են աշխատում նրանից մի բան իմանալ:

Նա բոլոր հարցերին թափահարում է ձեռքերը, գլխով անում դեպի ուղիով-կայանը և հազիվ կարողանում արտասանել՝ «Յերևանը... մերոնք...»—խեղճ տղա,—ասում են կարեկցաբար նրան նայողները,—խելագարվել է:

Յեվ, իրոք, հեռախոսակն այդ վարկյանին խենթացել էր ուրախությունից, յերբ լսել էր ուղիով-կայանի վրա

հյուսիսային խմբակը մտել է արդեն Յերևան: Շտաբ հասնելով, նա մի փոքր հանդատանալուց հետո, հրամարտությունը հայտնում է Յերևանի գրավման ուրախ լուրը: Բոլորը շտապում են ուղիով կայանը: Փողակը վերցնում է Հայաստանի Ռազմաօդկամը: Յերևանից կրկին հաստատվում է Կարմիր Բանակի կողմից Յերևանը գրավելու լուրը: «Ուտա»—կանչում է փողակի մեջ Ռազմաօդկամը: —Ուտա—դղրդում է ամբողջ ճակատը, յերբ լսում է Յերևանի գրավման լուրը: Յեդրայրական Կարմիր Բանակը գալիս էր վերջ տալու հայկական չընկալատված կարմիր զորամասերի տառապանքներին:

Ապրիլի 2-ի դիշերվա ժամի 12-ին բանակի հրամարտը հրաման է տալիս, ապրիլի 3-ի լուսաբացին հարձակման անցնել յերկու զորաւոյունով:

Զորամասերն առանց հակառակորդի կողմից դիմադրություն հանդիպելու ապրիլի 3-ի յերեկոյան դեմ հասնում են Նորադավիթ գյուղը: Այդտեղ նրանք տեղավորվում են դիշերանցի համար: Ապրիլի 4-ի առավոտան ժամի 11-ի մոտերը նրանք հասնում են Յերևանին: Քաղաքում նրանց հանդիսավոր ընդունելություն են ցույց տալիս 20-րդ դիվիզիայի զորամասերն ու Յերևանի բնակչությունը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՉՄՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԴԱՐԱԼԱԳՅԱԶԻ ՎՐԱ

Յերևանի գրավումից հետո համաձայն Յերևանի ուղղություն հրամատարի 1921 թ. ապրիլի 7-ի հրամանի Հայկական Կարմիր Բանակի զորամասերը ամեն տեսակետից յենթարկվում են խմբակի հրամատա-

րին, իսկ վերջինիս միջոցով Հայաստանի Ռազմաօդ-
կամին:

Համաձայն նույն հրամանի պահանջվում էր Հայ-
կական Կարմիր Բանակը վերակազմել: Բանակին տրվում
է 3-դնդային կազմի ու 2 թեթև դաշտային ու 1 լեռ-
նային մարտիկների կազմով մեկ թեթև հրետրած-
նյակի բրիգադների կազմակերպություն: 2-րդ և 3-րդ
հայկական հրաձիգ զնդերը մտնում են բրիգադի կազմի
մեջ. դաշնակների 1-ին և 4-րդ զնդերից մեկ անձնա-
տուր յեղած մասերից կազմակերպվում է 1-ին հրաձիգ
բրիգադի 1-ին հայկական գունդը:

Թիֆլիսում դանդաղ հայկական զնդի կազմից կազ-
մակերպված Լուսիա գունդը համարվում է Հայկական
Կարմիր Բանակի 4-րդ գունդը: Հայկական հեծրիգա-
դից կազմակերպված հավաքական հեծյալ գունդը
համարվում է Հայկական Կարմիր Բանակի 1-ին հեծյալ
գունդը: Վեդերասարի «Կարմիր Տարորդ» յենթարկ-
վում է 6-րդ հրաձիգ բրիգադի հրամատարին:

Ապրիլի 12-ին հայկական բրիգադը, ուժեղացրած
հայկական հեծյալ զնդի վաշտով և ընկ. Աբա-Աուլի
բեկի «Կարմիր տարորդով» հրաման է ստանում ապրիլի
14-ի լուսաբացին հարձակվել Դարալագյազի վրա և
լիկվիդացիայի յենթարկել դաշնակցական բանակի մը-
նացորդները:

Բրիգադի հրամատարը, հրամանը ստանալով՝ վը-
ճում է հարձակվել յերկու զորասյուներով՝ գլխավոր
հարվածը հասցնելով իր աջ թեկով:

Աջ զորասյունի զորամասերը ապրիլի 14-ի գրա-
վում են Արփան և ապրիլի 15-ի լուսաբացին հարձակ-
ման անցնելով, գրավում են Այնազուրը: Այնուհետև

բրիգադը հարձակվում է Քեչիչքենդի վրա և հաճա-
մարտերից հետո, գրավում է Ղոյթուլը: Քեչիչքենդին
տիրելու համար մղած մարտը շարունակվում է մինչև
ժամի 24-ը:

«Կարմիր Տարորդ»-ը խմբակի հրամատարից իրա-
վունք է ստանում առաջ անցնելու և մարտին ակտիվ
մասնակցելու: Թուրք ընկերները անցնում են առաջին
զինն ու հրաձգություն բացում: Չնայած խավարին՝
դաշնակները մրրկային կրակ են բացում զնդացիներն-
րից: Սակայն այդ կրակը, վոր բացված է քարերի յե-
տեխն լավ թաղնված անտեսանելի թշնամու դեմ բնա-
կանաբար վոչ մի վնաս չի կարող հասցնել վոչ վոքի:
Մերոնք ծիծաղում են հակառակորդի այդ ջղախու-
թյան վրա: «Ուռա» գոչում են մերոնք. հակառակոր-
դի կողմից զնդացրային կրակը կրկնապատկվում է:
Մերոնք մի պահ լուռ են և պատասխանում հատու-
կեան հրաձգությամբ: Մի քանի րոպե դադար տալով
զնդացիներին «Կարմիր Տարորդ»-ի կողմից նորից
հնչում է զիլ ուռան: Դաշնակները սլարդ պատկերաց-
նում են իրենց վրա դրոհող հակառակորդին, թեև գի-
շերային մթության մեջ, տեղացող հորդ անձրևի տակ
նրանք վոչ վոքի չեն տեսնում: Կրկին ջղախությամբ
բաց են թողնում մի քանի ժապավեն: Մերոնք կանդ-
նել բուռն ծիծաղով դիտում եյին այդ զավեշտական
չրությունը:

—Տո, գոնե փամփուշտները խնայեյին, ինչո՞ւ յին
իդուր փչացնում:

—Մեկո՛ք, իրենց հոր ապրա՞նքն է, վոր ախոսան,
դոնե դրանով սիրտները հովացնում են:

Ժամի 24-ին հակառակորդն ողավելով հորդ ան-
ձրևից ու գիշերային խավարից յետ է քաշվում ֆոր-

փաշալու—Գնդեմալ—Ղուչչի—Բիլակ գետեր, վորտեղ
և ամրանում ե: Ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը
ռազմական գործողություններ տեղի չեն ունենում:
Միայն հրաձգություն եր տարվում հետախույզների
միջև:

Յերեանի և Դարալագյազի շրջաններում լիկվի-
դացիայի յենթարկելով ապստամբական շարժումնե-
րը, 1921 թվի ապրիլին հրամատարություն և Հայաս-
տանի խորհրդային իշխանության ուղադրություն
ուղղված եր Զանգեզուր, վորտեղ Յերեանից դուրս
բնաժ «Հայաստանի փրկության կոմիտեի» ղեկավա-
րութեամբ կենտրոնացել եյին խորհրդային իշխանու-
թյունից դժգոհ տարբերը:

Զանգեզուրում կազմվում ե այսպես կոչված «Լեո-
նային Հայաստան»-ի կառավարություն ու նրա զոր-
քերի գլուխ ե կանգնում խմբապետ Նժդեհը (բուլղա-
րական բանակի նախկին սպա):

Չնայած նրան, վոր արդեն ապրիլի վերջին ուսա-
կան ու հայկական կարմիր զորամասերը կենտրոնա-
նում են Զանգեզուրի սահմաններում, հարձակման մա-
սին տրված հրամանը հետաձգվում ե: Մեր գլխավոր
նպատակն եր ռազմական գործողությունների չդիմել:
Ռազմական գործողությունների հետևանքով պետք ե
տուժեր Զանգեզուրի խաղաղ բնակչությունը: Մեր
մտադրությունն եր ընդհանուր լեզու գտնել և Զան-
գեզուրի հարցը լուծել խաղաղ ճանապարհով:

Մայիսի 20-ին խորհրդային Հայաստանի կառա-
վարություն և «Լեոնային Հայաստան»-ի կառավարու-
թյան միջև սկսվում են խաղաղ բանակցություններ:
Նախնական խորհրդակցությունների ժամանակ թվում

եր, յերկու կողմերն ել ընդհանուր լեզու յեն գտել
Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու
համար: Կողմերի ներկայացուցիչների վերջնական
խորհրդակցությունը պետք ե կայանար հունիսի 18-ին
ձեռնարկում: Հայաստանի խորհրդային կառավարու-
թյունը հաշվի առնելով Զանգեզուրի խնդրի խաղաղ
ճանապարհով լուծելու ընթացքը, դյուրական տնտե-
սության մեջ բանվորական ձեռքերի բացակայու-
թյունը և բերքի հավաքման անհրաժեշտությունը, վորոշում
ե մեծահասակների մասնակի զորացրում կատարել:
Այդպիսով տուն ե արձակվում բրիգադի կարմիր բա-
նակային կազմի 50 տոկոսը, վորը և զգալիորեն աղ-
բում ե կարմիր զորամասերի մարտունակության վրա:

Պարզելով Դարալագյազի ճակատի թուլացումը և
11 կարմիր բանակի կենտրոնացումը Զանգեզուրի սահ-
մաններում և հաշվի առնելով, վոր Զանգեզուրի հար-
ցի անբարենպաստ լուծում ստանալու դեպքում հունի-
սի 20-ին կարմիրներն անմիջապես կանցնեն հարձակ-
ման, Նժդեհը վճռում ե Ղարաբաղ-Զանգեզուր ճակա-
տում պաշտպանվելով, հարձակման անցնել Դարալա-
գյազի ճակատում և կործանել հայկական բրիգադը,
վորից հետո նա կարող կլինի Հայաստանի խորհրդա-
յին կառավարությունը թեւադրել «Լեոնային Հայաս-
տան»-ին ձեռնադու պայմաններ:

Դարալագյազի ճակատում հրամատարությունը
հանձնվում ե դնդապետ Թաթևանյանին և Յապոնին:
Նրանք վճռում են 3 զորայինով հարձակվել, բրիգա-
դը աքցանի մեջ առնել, Արիա գյուղի մոտ կտրել Ար-
փաշայ գետի վրայի կամուրջը և վոչնչացնել բրի-
գադը:

Հունիսի 15-ին հակառակորդը հարձակման ե

անցնում ամբողջ ճակատի վրա: Զորդ հայկական դուռնը չդիմանալով հակառակորդի ուժեղ ճնշմանը, սկսում է անկարգ նահանջել: Ճակատ յեկած ռազմկուսին հաջողվում է կարգի բերել դուռնը, բայց հարձակումը կատարել չի հաջողվում: Գուռնը սկսում է կարգով նահանջել Գնդեաղ-Սաչիկ և յետ քաշվել Նախիջևանի կողմը: Այդպիսով նա թողնում է բաց 3-րդ հայկական դնդի թևը: 3-րդ հայկական դուռնը յերկու թևերից ել շրջանցված լինելով, ստիպված յետ է քաշվում Ալադյոզ-Հայի արեւմտյան ափը և ամրանում Այնաճորից արեւելք գտնվող բարձունքում, իր աջ թևում ունենալով 1-ին հայկական դուռնը (Արփաչայ գետի և Ղոյթուլի տեղամասում):

Հունիսի 17-ին հակառակորդն առաջապահ դորամաս թողնելով 1-ին և 3-րդ գնդերի դիմաց, իր հեծելազորով շրջանցում է բրիգադի յերկու թևերը: Հունիսի 15-ից 2-րդ հայկական դնդի հետ կապ չկար: Հակառակորդը Այար դյուղի մոտ իր տրամադրության տակ ուներ Արփաչայ գետի վրա ընկնող կամուրջը, այլև տեղական դյուղացիներից կաղմած հեծելազորը, փոքր չափազանց հեշտությամբ անցնում էր Արփաչայ գետը: Կարմիրների համար գետն անանցելի յեր: Կարմիրները փորձում են անցնել Արփաչայ գետը, սակայն կորցնում են 9 հոգի, փորոնք խեղդվում են: Գետըն անցնել չի հաջողվում: Ժամի 16-ին հակառակորդը Այարի և Այնաճորի կողմից մտնում է բրիգադի թիկունքը: Գնդերը վախենալով շրջապատվելուց և Արփա դյուղի մոտ ունենալով միակ դետանցքը Արփաչայն անցնելու համար, սկսում են նահանջել դեպի Արփա:

3-րդ հայկական դնդի 1-ին դումարտակը նա-

հանջում է վ. Ղարանլուխ, իսկ մյուս դումարտակները 50 դերի և մի մարտից հակառակորդին թողնելով, նահանջում են Բաշնորաչեն: 1-ին հայկական դուռնը լիովին հանձնվում է հակառակորդին:

Դաշնակները դերելով 1-ին դուռնը, սկսում են հանել կարմիր բանակայինների ու հրամատարների չորերը և գնդակահարել կոմունիստներին (գնդի հրամատարը, կոմիսարը և մի քանի կուսակցական գնդակահարվում են տեղնուտեղը): Միևնույն ժամանակ նրանք մոռացության են առել Արփա դյուղի մոտ գտնվող կամուրջի դրաման անհրաժեշտությունը: Այդպիսով նրանք կարող եյին բրիգադը կտրել թիկունքից և ջախջախել վերջնականապես: Սակայն այդ հանդամանքն աչքաթուղ է արվում հակառակորդի կողմից: Դրանով հնարավորություն է արվում 3-րդ գնդի դումարտակներին ապաստվել շրջապատումից: Մարտիցի կարմիր բանակայինները հրանոթները փրկելու հնարավորություն չունենալով, թողնում են մարտիցը և նահանջում Բաշնորաչեն, իրենց հետ վերցնելով մարտիցի բոլոր ձիերը: Բրիգադի ձախ թևվում գործող «Կարմիր Տարոր»-ը Ռինտի կողմից շրջապատվում է ձիավոր ջոկատով: Նա նահանջում է Յուխարի Տանձիկ, թողնելով շատ սպանվածներ ու վիրավորներ:

Այդպիսով Նժդեհը, գտնելով, վոր խորհրդային կառավարությունը չի կարող բավարարել «Լեւոնային Հայաստան»-ի կառավարության պահանջը և ստիպված պիտի լինի Չանդեղուրի հարցը լուծել դենքի ուժով, վճռում է հարվածել Դարալաղյաղում, շարքից հանել հայկական դորամասերը, փորից հետո իր ամբողջ ուժերը փոխադրելով Ղարաբաղ-Չանդեղուր ճա-

կատը՝ Հայաստանի խորհրդային կառավարութեանը կթելադրի իր պահանջները:

Խմբապետները չեն իրադրոժում Արփա գյուղի մոտ գտնված կամուրջը կտրելու մասին տրված հրամանը, տարվում են գերիներով և կոմունիստների զնդակահարութեամբ: Դրանով բացասվում է բրիգադի վերջնական ջախջախման հնարավորութիւնը:

ԿԱՐՄԻՐՆԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՎՐԱ ՅԵՎ ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԼԻՎԼԻԴԱՑԻԱՆ

Դարալազյաղի վրա կատարած հակառակորդի հարձակումը հարկադրում է խորհրդային կառավարութեանը արագացնել Զանգեզուրի վրա հարձակվելու հարցը:

Հունիսի 20-ին առանձին Կովկասյան բանակի հրամատարը հրաման է արձակում ընդհանուր հարձակման անցնել 4 կողմից: Գլխավոր հարվածը հասցնում է Գոքիս-Զանգեզուր-Ղարաբաղի խմբակը, վորի կազմի մեջ մտնում էին 82-րդ հրաձգային բրիգադը, 124-րդ առանձին բրիգադը և 108-րդ հեծ-գունդը ընդամենը 5 հազար 175 մարտիկ, 400 թուր, 12 հրանոթ, 97 զնդացիք և 7 սավառնակ:

Յերեանի խմբակին հրամայվում է աջակցել Ղարաբաղ-Զանգեզուրի խմբակին նրա վրա դրած խնդրի իրադրոժման մեջ, կտրել Մեղրուց Պարսկաստան տանող ճանապարհը: Յերեանի խմբակը հարձակման համար բաժանվում է յերեք հարվածային ջոկատների:

Բացի այդ, Նոր-Բայազետի կողմից պետք է հարձակվելին 3-րդ հայկական զնդի մի դումարտակը՝ 140 սվինի, 3 զնդացիքի կազմով, և 20-րդ հեծգունդը (223 թուր) Սելիմի կիրճի և Քելիջքենդի ուղղությամբ

(այդ ժամանակ Սելիմի կիրճը գրավված էր հակառակորդի կողմից), վորտեղ պետք է միանային բրիգադին: Ընդամենը կարմիրների կողմից հարձակվում էին 9 հազար 35 սվին, 1 հազար 236 թուր, 20 հրանոթ, 247 զնդացիք, 2 զրահազնայք և 7 սավառնակ:

Զանգեզուր-Ղարաբաղի և Յերեանի խմբակների դեմ հակառակորդն ուներ 6 հազար 800 սվին, 2 հազար 460 թուր, 6 հրանոթ և 96 զնդացիք:

Յերեանի խմբակի դեմ ուղղված ռազմական գործողութիւնների ընդհանուր հրամատարութիւնը հանձնվել էր զնադպետ Թարխանյանին: Համարյա մոտ 2 և կես ամիս տևող դադարի ժամանակաշրջանում կարմիրների կողմից տարվում է ուժեղ քաղաքական աշխատանք: Հրատարակվում են մի քանի կոչեր՝ ուղղված Զանգեզուրի բնակչութեանը: 1-ին հեծյալ կորպուսի շտաբի կողմից մանրամասն հրահանգ է տրվում հրամատարական ու քաղաքական կազմին, կարմիր բանակիյնների քաղաքական մշակման համար, վորտեղ մանրամասն վեր է լուծվում դաշնակների և մուսավաթիստականների քաղաքականութիւնը:

Զանգեզուր-Ղարաբաղի ջոկատի ընդհանուր հարձակումը նշանակվում է հուլիսի 2-ին: Հակառակորդի ուշադրութիւնը Զանգեզուր-Ղարաբաղի և Յերեանի խմբակների ճակատից հեռացնելու նպատակով, 1-ին հայկական բրիգադին հրամայվում է հունիսի 22-ին լուսաբացին հարձակվել Քելիջքենդի վրա Ղուրդուղյան-Յենդիջա-Ղոյթուր-Սալի գիծը դուրս գալու նպատակով: 20-րդ հեծգնդին 3-րդ հայկական զնդի մի դումարտակի հետ միասին հրամայվում էր գրավել Սելիմի կիրճը և միանալ հայկական բրիգադին:

Հունիսի 22-ին հայկական բրիգադը հարձակման է անցնում և համառ մարտերից հետո դրավում է Յալդուզ սարը, Ամաղա, Արփա, Զիվա գյուղերը: Հունիսի 23-ի գիշերը հետապնդելով հակառակորդին դրավում է Բաշքենդ, Քեշիշքենդ, Մալիշկա, Գարաշիտ, Յենգեշա գյուղերը, վրցնելով մի մարտից (2 հրանոթ) սպասարկող անձնական կազմով, 1 հազար 750 զեռի, 4 զնդացի, 37 ձի և մեծ քանակությամբ հրանյութեր:

Հունիսի 24-ին հակառակորդը հարձակվում է 10.242 բարձունքի վրա: Սակայն 178-րդ դունդը հա-կահարձակումով նրան յետ է շարտում Մեղրի: Հակառակորդի Դարալադյազի խմբակի ջախջախվելը նախո-րոշում էր ամբողջ բանակի կործանումը: 3-րդ հայկա-կան զնդի մի գումարտակն ամսի 22-ին անցնում է հարձակման, գրավում Սելիմի կիրճը և շարունակում հարձակումը դեպի Հասանքենդ, վորտեղ միանում է իր զնդին: Հունիսի 26-ին բրիգադի զորամասերը հակառա-կորդի կողմից դիմադրության չհանդիպելով, հասնում են Փոք, Փաշալու, Գնդեվազ գյուղերին: Գնդեվազը գրավելուց հետո խմբապետ Յապսնից նամակ է ստացվում, վորը խնդրում է հայտնել Հայաստանի Խորհրդային կառավարությանը, վոր «Լեռնային Հա-յաստանի» կառավարությունը ցանկանում է խաղաղ բանակցություններ սկսել:

Հունիսի 26-ին 178-րդ հրաձիգ դունդն առանց մարտի գրավում է 10.194 բարձունքը: Այդ ժամա-նակ միջին մարտական տեղամասի կենտրոնացումը դեռ վերջացած չէր: Հունիսի 28-ի լուսաբացին կենտ-րոնանալով, միջին մարտական տեղամասի զորամասե-րը Հունիսի 28-ի լույս 29-ի գիշերն անցնում են հար-

ձակման ընդհանուր ուղղություն ունենալով Անգեղա-կոթը: Ժամի 5-ի մոտերը 180-րդ դունդն առանց մար-տի գրավում է Բիչանակի կիրճը և յերեկոյան դեմ հասնում է Անգեղակոթ-Մաղրա գյուղին, Անգեղակոթ գյուղում գրավելով հրանյութերի պահեստը:

Հունիսի 29-ին հայկական բրիգադը գրավում է Ջուլ, Ղուչչի-Բիլակ, Բաղար-Հայ գյուղերը: Այդտեղ բրիգադը հրաման է ստանում դադարեցնել հարձակու-մը և ամրանալ գրաված գիրքերում: Հունիսի 30-ին միջին մարտական տեղամասի զորամասերը գրավում են Ղարաքիլիսա, Ջալաջուզ գյուղերը, կապ հաստա-տելով ձախ մարտական տեղամասի 2-րդ հայկ. զնդի հետ: Այդպիսով Յերևանի խմբակի զորամասերը հու-նիսի 30-ի մոտերը գրավում են Մխիթանի չրջանը, այն ժամանակ, յերբ գլխավոր հարվածը հասցնող Ջանգեղուր-Ղարաբաղի խմբակը նոր էր ավարտում զորքերի կենտրոնացումը Ջանգեղուրի սահմաններում:

Հուլիսի 2-ին Ջանգեղուր-Ղարաբաղի խմբակը հրաձակման է անցնում ամբողջ ճակատի վրա: Այդ խմբակի 246-րդ դունդը Խնածախ և Ղաղնափար գյու-ղերին անհետ համար մղած համառ մարտերից հետո, հակառակորդի գերազանց ուժերի աղղեցության տակ, ժամը 13-ին յետ է քաշվում Սուլթանքենդ, բայց թի-կունքից առաջ քաշված ուժերի ոժանդակութամբ կրկին հարձակման է անցնում և յերեկոյան դեմ գրա-վում Խնածախն ու Ղաղնափարը: Միաժամանակ խմբակի գլխավոր ուժերը 2-ժամյա մարտից հետո դրավում են Տեղ գյուղը, հակառակորդին շարտում հարավ և հետապնդելով նահանջող հակառակորդին ժամի 16-ին գրավում են Գորիս քաղաքը վերցնելով հակառակորդի հրետանային պահեստը:

Յերևանի խմբակի ձեռնարկում աջ մարտական ջոկատը ուժեղացրած ձախ մարտական տեղամասից վերացրած «կարմիր տաբուրով» շարունակում է հարձակումը Մեղրու վրա:

Միջին մարտական տեղամասում հակառակորդն անսպասելի կերպով գրոհում է 4-րդ հայկական հրաձիգ գնդին՝ Քալբերիդադ սարի և Ախլաթան դյուղի տեղամասում: 3 ժամյա մարտից հետո հակառակորդը յետ է շարտվում: 1-ին հայկական հեծգունդը ժամի 18-ի մոտերը մտնում է Գորիս քաղաքը Զանգեզուր-Ղարաբաղի խմբակից 2 ժամով ուշ:

Հուլիսի 3-ին Յերևանի խմբակի աջ մարտական տեղամասում հակառակորդը հարձակվում է Սոուխ-Դաղի վրա և գրոհելով ձախ թևը՝ ստիպում է մարտական տեղամասի զորամասերին նահանջել: Զորամասերը մի քանի անգամ անցնում են հարձակման Սոուխ սարը գրավելու նպատակով, սակայն անհետևանք: Մարտական տեղամասի հրամատարութունը, հաշվի առնելով զորամասերի հոգնածությունը, սաստիկ շոգը, վոր հասնում էր 55 աստիճանի և ջրի բացակայությունը, հրամայում է մարտական տեղամասի զորամասերին յետ քաշվել Ուղուբաթից 8 կիլոմետր դեպի արևելք ընկնող բարձունքների դիժը և ամրանալ:

Հուլիսի 4-ի առավոտյան ժամի 9-ին 1-ին հայկական հեծգունդն առանց մարտի գրավում է Ցաթևը, կապ հաստատելով 82-րդ առանձին հրաձգային բրիգադի հետ: Հուլիսի 5-ի յերեկոյան դեմ Զանգեզուր-Ղարաբաղի խմբակի զորամասերը հասնում են Դոնդարլու-Ձեյվա դյուղերին: Ձեյվան գրավելուց և Զանգեզուր-Ղարաբաղի խմբակի հետ կապ հաստատելուց հետո Յերևանի խմբակի զորամասերին, 4-րդ հայկական

և 1-ին հեծգնդերից բացի, տրվում է 4-որդա հանգիստ: 4-րդ հայկական և 1-ին հեծգնդերը, Կովկասյան Առանձին բանակի հրամատարի հրամանի համաձայն, յենթարկվում են Զանգեզուր-Ղարաբաղ խմբակի հրամատարությանը:

Հուլիսի 6-ին 372-րդ հետևակային դուշը 246-րդ հետևակային գնդի մի գումարտակով մարտով դրավում է Արվանյու, Տանձավեր և հասնելով Ղուխոյ-Պաշ-Դաշքյարքի սարին՝ ամրանում: 370-րդ դուշը հուլիսի 7-ին հասնում է Ղաթարի պղնձահանքերին: Հակառակորդը շտապ յետ է քաշվում, թույլ դիմադրություն ցույց տալով: Հուլիսի 11-ին 246-րդ գնդի հետախույզությանը հասնելով Քուրդքենդ դյուղին, գտնում է, վոր հակառակորդը թողնելով 3 հրանոթ Մեղրում և անցնելով Արաքս գետը, մտել է Պարսկաստան: Հուլիսի 13-ին Զանգեզուր-Ղարաբաղի խմբակի զորամասերը հասնում են Մեղրի:

Այդպիսով Զանգեզուրի խնդիրը, վորի լուծման համար պահանջվում էր մի քանի ամիս, լուծվում է 15 օրվա յնթացքում:

Հուլիսի 2-ից մինչև 13-ը տեղյ մարտերում Զանգեզուր-Ղարաբաղի խմբակի զորամասերը հակառակորդից դրավում են 53 գնդացի, 3 հրանոթ, 1 ռադիոկայան, 28 զինամոմեքենաներ (վորոնց պետք է Պարսկաստան ուղարկվեյին) և շատ հրացաններ, փամփուշտներ, արկեր:

Զանգեզուրի անկումով կործանվում է «Հայաստանի փրկության կոմիտեյի» և «Լեռնային Հայաստանի» Կոտսովարության վերջին հենարանը, վորոնց ավանտյուրիստական գործողությունների հետևանքով ռադմի զաչտում զոհ գնացին մի քանի հազար անմեղ մար-

դիկ: Հայաստանի աշխատավորութեան թնամինների դաշնակիցների վերջին միացությունները փախչում են Պարսկաստան:

ՁՄՐԱՆ ԶՈՐԱԿԱՅԲԵՐՈՒՄ

Զանգեզուրի խորհրդայնացումից և դաշնակցական բանգանների վերջնական լիկվիդացիայից հետո գործառնները փոխադրվում են ձմրան գորակայքի: 2-րդ գունդը լենինական, հեծգունդն ու հրետային՝ Յերևան, 3-րդ և 4-րդ գնդերը՝ Դիլիջան: Ռազմականից խաղաղ պայմանների անցնելով, պահպանություն ծառայություն էլին տանում Դարբասլու-Ջուլֆա յերկաթուղագծի ու սահմանագծի վրա: Վեդիբասարի «կարմիր տարորը» իմրակի հրամատարի հրամանի համաձայն հանձնվում և ուղղմողկոմատի շտաբի յիակատար ստորադասություններ վերջինիս հայեցողությամբ սպասգործելու համար, վորովհետև «կարմիր տարորի» կարիքն արդեն անցել էր և մյուս կողմից՝ նա չունեի կանոնավոր գորական կազմակերպություն թե՛ շարքային և թե տնտեսական տեսակետից: 1921 թվի դեկտեմբեր ամսում հայկական Կարմիր բանակի գործառնները վերակազմվում են հայկական հավաքական բրիգադի: 4-րդ հայկական հրաձիգ գունդը մտնում է 3-րդ հայկական գնդի մեջ, վերջինս անվանվում է 1-ին հայկական գունդ, իսկ հետագայում՝ 1-ին հայկական հրաձիգ, ընկ. Լիպարիտ Միշյանի անվան, գունդ:

Համաձայն ՌՍՖՍՀ և ԱՍՖՍՀ միջև 1921 թվի դեկտեմբերի 8-ին կնքած կոնվենցիայի Բանվորագյուղացիական Կարմիր բանակի բոլոր գործառնները միանում են ընդհանուր հրամատարություն և դեկավորություն տակ: Հայկական հավաքական բրիգադը անցնում է Առանձին Կովկասյան բանակի հրամատարի

յիակատար ստորադասության տակ, յենթարկվելով միևնույն ժամանակ վարչական տեսակետից հանրապետության ռազմադրկոմատին:

Այդ որվանից հայկական հավաքական բրիգադը մտնում է ԽՍՀՄ գինված ուժերի ընդհանուր համակարգության մեջ, Բանվորագյուղացիական Կարմիր բանակի ընդհանուր սխտեմի մեջ, վորպես նրա անրաժան մասնիկը:

Խորհրդային Հայաստանի ժողովխորհի 1922 թվի հունվարի 28-ի դեկրետի հիման վրա, վորպեսզի հեշտացվի բնակչության համար գինվորագրությունը, հրամայվում է փետրվարի 1-ից բրիգադի գործառններից, ռազմական վարչություններից ու հիմնարկներից արձակել 1895 և 1896 թվի ծնված բոլոր կարմիր բանակայիներին:

Այդ թվականների կարմիր բանակայիները ծառայության մեջ էլին մնում միայն հրետանիում և հեծելազորում և ծառայությունից արձակվում էլին միայն 1922 թվի ապրիլի 1-ին: Հաշվի առնելով վերոհիշյալ հասակների կրտսեր հրամատարների ու մասնագետների հատուկ կարևոր նշանակությունը Կարմիր բանակի համար, պահանջվում էր նրանց ծառայության մեջ պահել ևս 1 տարի:

Բարձր հասակի կարմիր բանակայիները զորացրումից և Բանվորագյուղացիական Կարմիր բանակի ընդհանուր կրճատումից հետո համաձայն ռազմադրկոմի 1922 թվի սեպտեմբեր ամսվա № 154 հրամանի մի 1922 թվի ապրիլի 1-ին: Հաշվի առնելով վերանվանվում է սկզբում հայկական առանձին բրիգադի և ապա՝ 1922 թվի հոկտեմբերի 14-ից հայկական հրաձիգ դիվիզիայի:

Սկսվում են խաղաղ դադարի տարիներ:

Արտաքին ճակատները լիկվիդացիայի յենթարկելուց և Խորհրդային Միության ինտերվենտները վերջին ջոկատները մեր սահմանից հեռանալուց հետո (Հեռավոր Արևելք), կապիտալիստական խոշոր պետությունները ստիպված ելին ճանաչելու խորհրդային հանրապետությունները և նրանց հետ սկսելու առևտրական ու դիվանագիտական բանակցություններ: Խորհուրդների յերկրի առաջ ծառանում են մի շարք անմիջական լուծում պահանջող խնդիրներ: Միլիոնավոր բանակը պատերազմական պայմաններից անցնում և խաղաղ դրություն, այսինքն սկսվում և միլիոնավոր բանակի զորացրումը: Այդ շրջանը (Կարմիր բանակի պատմություն մեջ) չափազանց դժվարին և բանակի համար, վերջին հետևանքի յեր ունենում տնտեսական քայքայման պայմաններում, առանց կենտրոնական ազգական մարմնի ղեկավարություն:

Մյուս կողմից սկսվում և մեծ սոցիալիստական շինարարության շրջանը: Գոյանում եր Խ. Ս. Հ. Միությունը: Ընդունվում են մի շարք միջոցառումներ, վարհայտնի յեն «1924 թվի ունիորմներ» անվան տակ: 1924 թվի ունիորմը, վեր անց և կացնում Հեղափոխություն: Խորհուրդը յնի. Ծրուդեյի գլխավորությամբ սահման դեհեց Կարմիր բանակի խաղաղ ժամանակվա պատմության մեջ, նոր եջ բացեց Կարմիր բանակի, վերպես պրոլետարիատի դատակարգային բանակի անընդհատ ամրացման համար:

Կուսագրեցություն ու կազմակերպության աճման, բանվորական ծագում ունեցող հրամատարների վերակրթության, գործարանների հետ կապ հաստատելու, ղեկավար ուժերի շինարարության հիմքը դարձած յերկրային սխառեմի միջոցով Կարմիր Բանակը և նրա հետ միասին, նրա մասնիկը կարմուղ Հայկական Հրա-

ձեղ Դիվիզիան, ամրացնելով կապը պրոլետարիատի ու դուրացիական չքավորության կազմակերպությունների հետ, անցավ ուժեղ ուսուցման, ծավալելով ամբողջ յախությունը ռազմական, քաղաքական և կուլտուր-լուսավորական աշխատանքի:

Հայկական Դիվիզիան խաղաղ ժամանակվա պայմաններում տարեց-տարի բաց և թողնում յեր շարքերից ռազմապես և քաղաքականապես պատրաստված հազարավոր կարմիր մարտիկներ: Նրանք հեռանալով Դիվիզիայի շարքերից Խորհրդային Հայաստանի ամենահեռավոր անկյունները, դառնում են մեր յերկրում սոցիալիզմի շինարարության ակտիվ աշխատողները: Տեխնիկայի դարգացման, ժողովրդական տնտեսության աճման, կուլտուրական մակարդակի բարձրացման հետ միասին ամրանում և ԲԳԿՅ շինարարության տեխնիկական բազան: Հայկական Հրաձեղ Դիվիզիան յետ չի մնում Մեծ Կարմիր Բանակից. և դռնվելով ուժեղ ուսուցման մեջ, համարձակ առաջ և շարժվում՝ պատրաստ պատշաճ դիմադրությունը ցույց տանու մեր թշնամիներին:

ԿՈՒՍ-ՔԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Համաձայն Հայաստանի Ռազմաթողիմի 1924 թվի դեկտեմբերի 12-ի հրամանի կազմակերպվեց Հայկական Կարմիր Բանակի Քաղաքական Վարչությունը: Քաղաշխատողների հիմնական կազմը վերցված եր Հայկական Առանձին զնդից, թվով 97 հոգի (կուսակցություն անդամներ):

Նախ քան փետրվարյան ավանտյուրան Քաղվարչություն հիմնական խնդիրներ՝ բրիգադան աշ-

խատողներ մատակարարելը, բրիգադներն ու զնդերի
ոսգմկոմներ և ոսգմկոմների ողնականներ նշանակելը:

Բրիգադներն առանձին քաղաքական մարմիններ
չունեցին: Բրիգադի կոմիտարն իր ողնականով ու քար-
տուղարով հանդիսանում էր բրիգադի քաղաքային: Այդ
բացատրվում է նրանով, վոր չկային համապատաս-
խան վորակի քաղաքական աշխատողներ:

Յերեանից նահանջելուց հետո, այսինքն՝ փետր-
վարի 18-ից մինչև ապրիլի 4-ը գործող գործառնորին
կից աշխատում էր բանակի դաշտային քաղվարչու-
թյունը, թվով 4—5 հոգի: Նա եյական ոգուտ տալ չէր
կարող: Ամենակատարի մարտերի շրջանում գործառ-
նորում չէր կարելի տանել վոչ մի սլանային քաղաքա-
կան կամ կուսակցական աշխատանք: Առավել ևս չէր
կարելի դպրոցական և ակմբային աշխատանք տանել,
գտնվելով սլաշարված կաշադորի դրության մէջ: Բայց
այդ բացը լրացվում էր Հայաստանի կոմկուսակցու-
թյան կենտրոնական կոմիտեյի և Ռազմահեղափոխա-
կան կոմիտեյի անդամների անձնական շփումով և ան-
միջորեն գործառնորում կատարած աշխատանքով:

Բանակի քաղվարչության, կենտկոմի ու Ռազմա-
հեղափոխական կոմիտեյի ամբողջ գործունեյութունն
ընթանում էր յերեք ուղղությամբ. — բարձրացնել
կարմիր բանակայինների մարտական վողին, աշխա-
տել տեղական բնակչության մէջ և աշխատել բանակի
թիկունքային մասերում: Վաշտային բլիջներ կային
միայն 3-րդ գնդում և կոմունիստական ջոկատում:
Բլիջների աշխատանքը ղեկավարում էյին գնդերի կո-
միտարները՝ գումարտակների կոմիտարների միջոցով:
Քաղդեկները մեծ մասամբ առաջ էյին քաշված մարտում

անձնական քաջությամբ աչքի ընկած կարմիր բանա-
կայիններից: Նրանք ի վիճակի չէին ղեկավարելու
կուսաշխատանքը, բայց դրա փոխարեն կարող էյին
մարտում անձնական որինակով աղղել կարմիր բանա-
կային մասսայի վրա: Բանակի մնացած գործառնորում
բլիջները գոյություն ունեցին միայն գնդերի, իսկ
178-րդ գնդում միայն գումարտակների մասշտաբով:

Ստեղծված ծայր աստիճան ծանր մարտական սլա-
րագայում միանգամայն անհնար էր կաղմակեղել ժո-
ղովներ, գրույցներ և արն: Այդ ստանառով կարմիր
բանակայինների վողին բարձրացնելու միակ միջոցը
քաղաշխատողի, հրամատարի, կուսակցականի ու կոմ-
յերիտականի անձնական որինակն էր: Այդ կողմն ա-
ռանձնապես շեշտում էյին բոլոր շրջաբերականներում,
հրամաններում, հեռախոսագրերում և անձնական
ղրույցներում կենտկոմը, բանակի Քաղվարչությունը,
Հեղկոմն ու բանակի հրամատարությունը:

Միաժամանակ համարյա բոլոր կոմունիստները,
փորնից առողջությունը ներում էր, թիկունքից ու-
ղարկվել էյին մարտական մասերը, վորպես գումար-
տակների ոսգմկոմների ողնականներ, քաղդեկներ և
այլն, մասնակցելու մարտերին առաջին շարքերում:
Նրանով էլ բացատրվում են կուսակցականների մեծ կո-
րուստները ողերացիաների ընթացքում, վորոնք կաղ-
րուստները ողերացիաների համարյա 60 տոկոսը:
Մում էյին բոլոր կորուստների համարյա 60 տոկոսը:
Քաղվարչությունը մեծ ուշադրություն էր նվիրել
բնակչության մէջ տարվող աշխատանքին, գլխավորա-
պես ճակատին մոտ շերտում և մանավանդ թուրք բնակ-
չության մէջ, ինչպես նաև ըստ հնարավորին ճակատի
մյուս կողմում կանխելու համար աղատամբության

ուժեղացումը: Կուսակցական—քաղաքական ճիշտ գծի արդյունքն է հանդիսանում «Կարմիր Տարրեր» կազմակերպումը:

Զորամասերին, հրամանատարներին ու կոմիտայներին անընդհատ հիշեցվում էր այն մասին, վոր անհրաժեշտ է ուշադիր վերաբերվել դեպի բնակչութունը, վոչ մի կերպ թույլ չտալ վորեւէ ինքնակամ բռնադրավումներ, հարգել տեղական սովորությունները և այլն:

Յերևանը յերկրորդ անգամ գրավելուց հետո բանակի քաղվարչությունը նորից լիովին համալրվեց ըստ հաստիքի (չտառի), սակայն հնարավոր չէր ղեկավարել Գարալյալյազ—Զանգեզուր ճակատում գործող զորամասերին, դանվելով Յերևանում, նախ՝ զորամասերից կտրված լինելու պատճառով, յերկրորդ, տեխնիկական կապի բացակայութեան հետևանքով և յերրորդ՝ բրիգադի քաղաքական բաժնի բացակայութեան շնորհիվ: Զորամասերի քաղաշխատանքը ղեկավարում էր բրիգադի ռազմկոմը, վորը մի կողմից այնքան էլ պատրաստված չէր ղեկավարելու գնդերի քաղմարմիններին աշխատանքները և մյուս կողմից՝ անհնար էր ղեկավարել, ունենալով միայն մեկ քարտուղար: Հաճախ պատահում էր, վոր բրիգադի ռազմկոմը քարտուղարի հետ միասին մեկնում էր զորամասերից մեկը, իսկ մնացած զորամասերը վոչ միայն շարաֆներով չէին ունենում վոչև ղեկավարություն բրիգադի ռազմկոմի կողմից, այլ և շատ հաճախ չգիտեին նրա ուր լինելը: Յերևանում վերոհիշյալ պատճառներից, քաղբաժնի բացակայությունն զգացվում էր առանձնապես սուր կերպով: Ամբողջ պատասխանատվություն ընկնում էր զորամասի կուսակցականների վրա: Գնդերի քաղմար-

մինները, լացի իրենց անմիջական խնդիրներից, պետք է նաև կազմակերպեին տեղական իշխանութուն—հեղ-կոմներ, ակտիվ մասնակցեին հեղկոմների աշխատանքներին:

Թերթերը ստացվում էին ամսական 1—2 անգամ: Գործող զորամասերի հետ կապ հաստատելն անհնար լինելու պատճառով ամբողջ աշխատանքը նվիրված էր թիկունքային զորամասերին: Այստեղ աշխատանքը հաջողվեց տանել միանգամայն բավարար, վորի հետևանքով յեղավ այն, վոր անասելի ծանր պայմաններում (տրանսպորտի ու ճանապարհների բացակայությունը) Գարալյալյազի ճակատը ժամանակին մատակարարված էր կենսամթերքով ու ռազմապաշարով:

Ասպետների սկզբից բրիգադն ավարտելով մարտական գործողությունները, ծավալեց քաղլուսաշխատանքները: Սակայն այդ աշխատանքի համար պայմանները, մասնավորապես առաջին ամիսներում աննպաստ էին. զորամասերը ցրված էին, իսկ հաղորդակցությունը զգալիորեն տրանսպորտի քայքայման հետևանքով, կապը բանակի քաղվարչության հետ խանդաված էր, ուշացվում էր հրահանգների, թերթերի, պրակահույթյան փոխադրությունը ետյն:

Իայց և այնպես շատ մեծ էր քաղմարմինների կատարած աշխատանքը: Տեղերում բջիջներն ամենուրեք կապվում էին տեղական կազմակերպությունների հետ, վորտեղ այդպիսիները կային, իսկ վորտեղ չկային, կազմակերպում էին: Առանձնապես խոշոր դեր խաղացին կոմյերիտական բջիջները: Կոմյերիտ-միության անդամները քաղաքացիական կռիվների ճակատներում իրենց ուսերի վրա կրում էին ամենապա-

տասխանատու և զժվարին խնդիրը: Համարյա ամենուրեք, յերբ անհրաժեշտ եր հարձակման կամ պաշտպանության համար ուղերուիվ վորոշում ընդունելու նպատակով լեզուներ գտնել (հետախուզության կամ մարտի միջոցով գերի վերցնել), պարզել հակառակորդի դասավորության տեղը, նրա զորքերի տրամադրությունը և մի շարք այլ անհրաժեշտ տեղեկություններ հրամատարության համար, ամենուրեք այդ պատասխանատու խնդիրները հանձնարարվում եր կոմյերիտականներին:

Հիշում եմ, յերբ մեր զորքերն առաջին անգամ հարձակվում էին Յերեանի վրա, բանակի հրամատարությունը պետք է լիտրվարի 23-ից լույս 24-ի գիշերը հետախուզություն կազմակերպեր՝ վորոշելու համար հակառակորդի գլխավոր ուժերի տեղը: Հրամայվեց վաշտերի հրամատարներին ջոկել վաշտերից 5-ական մարդ, գլխավորապես կամավորներից: Խնդիրը չափազանց պատասխանատու յեր և այդ հետախուզության յուրաքանչյուր մասնակցող մեկնելուց առաջ կիսով չափ պետք է համոզված լիներ, վոր այլևս չի վերադառնալու: Ընդամենը պահանջվում եր 30 հոգի: Զոկածներից 24 հոգի կոմյերիտականներ էին: Մարտական գործողություններն ավարտելուց հետո կոմյերիտավորությունն ահալի աշխատանք եր կատարում մասերի զորակայքի վայրերում, կազմակերպելով գյուղերում յերիտասարդության բջիջներ:

Մինչև 1922 թիվն ամբողջ քաղաքական-լուսավորական աշխատանքը ղեկավարում եր Կարմիր Բանակի Հայկական քաղաքական բաժինը: Յերբ Հայկական Կարմիր զորամասերը մտան Մեծ Կարմիր Բանակի

ընդհանուր ընտանիքի մեջ, համաձայն Հեղափոխական-Ռազմական Խորհրդի ղեկավարների 14-ի հրամանի վերահղովեց հավաքական բրիգադի քաղաքական բաժինը: Հավաքական բրիգադի քաղաքական բաժինը յենթարկվում եր Կովկասյան Կարմրագրոշ Բանակի Քաղաքական Վարչությանը: Կարմիր Բանակի ընդհանուր կրճատումից հետո նույն թիվ սեպտեմբերին, համաձայն Ռազմաօդկամի հրամանի, բրիգադի քաղաքական վերանվանվում է սկզբում Հայկական Առանձին Բրիգադի և ապա Հայկական Հրաձիգ Դիվիզիայի Քաղաքական բաժնի: Հայկական Դիվիզիայի քաղաքական բաժնին անմիջորեն ղեկավարում է զորամասերի քաղաքականների աշխատանքը, կիրառելով Պուտի ԿԿԲ Քաղվարչության և Կենտկոմի այն բոլոր վորոշումներն ու չրջարեականները, վոր վերաբերում են Դիվիզիայի կուսակցական-քաղաքական աշխատանքին:

1922 թիվից տարվում է պրանային քաղաքական ու կուսակցական աշխատանք: Սկսվում է ամբողջ լայնությամբ ծավալված ուղղման, քաղաքական ու կուլտուր-լուսավորական աշխատանքը: Հաջող է վերնում անդրադիրտության վերացումը Դիվիզիայի զորամասերում:

Ակումբները, լենինյան անկյունները, խմբակներն ու կրոժակներն ընդգրկում են ամբողջ կարմիր բանակային կազմին: Կուսակցական կազմակերպությունը ստրեցտարի էր մեջ է առնում մի քանի հարյուր կարմիր բանակայիններ, բանվորների, բառարակների ու չքավորների լավագույն մասից:

Ամեն տարի տեղի յեն ունենում անկուսակցական կարմիր բանակայինների կոնֆերանսներ: Այդ կոն-

Ֆերանտներում քննարկում են Կարմիր Բանակի խոն-
դիրները, մասնաճյուղում են մեր նվաճումներն ու թե-
քույրությունները, ակտիվ մասնակցություն են ցույց տա-
լիս Կարմիր Բանակի շինարարությունը: 1929 թվից
սկսում է կանոնավոր լույս տեսնել Դիվիզիայի Քաղ-
րափնի որդան «Կարմիր Զինվոր» թերթը: «Կարմիր
Զինվորի» նշանակությունն որեցոր աճում է: Նրա տի-
րաժը, վոր 1922 թվին ընդամենը 350 էր, 1928 թվին
հասնում է 4 հազարի: «Կարմիր Զինվորը» միանգա-
միայն բավարարում է մեր Դիվիզիայի կարմիր բանա-
կայինների պահանջներին:

1922 թվից սկսել են գործել Դիվիզիայի կուսկոն-
ֆերանտները: Նորերս տեղի ունեցավ Դիվիզիայի կու-
սակցական 7-րդ կոնֆերանսը: Կոնֆերանսը լրել ներ-
կայացուցչությունը, գործարարությունը, պատգա-
մավորների ակտիվությունը, գաղափարական միաս-
նությունը ու ամրակուսությունը, որինակելի կարգա-
պահությունը ու տոկունությունը անցավ գերազանց:
Զեկուցումները տեղերից ցույց տվեցին, վոր Դիվի-
զիայի կոմունիստական ընտանիքն աճել է, հառաջա-
դիմել, ամրացել սխտեմատիկ պարապմունքներով և
համախմբվել Հայաստանի Կոմկուսակցության Կենտ-
կոմի նոր գեկավարության ու Դիվիզիայի քաղաքական
բաժնի շուրջը, կովելով կուսակցության ներսում յե-
ղած բոլոր թեքումների ու հաշտվողականության դեմ
և չնայած բոլոր դժվարություններին բարձր կրում է
լենինիզմի դրոշը:

Դիվիզիայի կուսակազմակերպությունը կոստանո-
պատի իր աշխատանքը ապահովելու համար կուսակ-
ցության հիմնական գիրեկտիվների ամենալրիվ կա-

տարումը: Նշելով աջ ուղորառնիզմի և հաշտվողակա-
նություն տեսակետների պրոպագանդի անհամատեղե-
լիությունը Համկ(բ) Կ պատկանելիություն հետ, կոնֆե-
րանսի բոլոր մասնակիցները՝ լենինյան միասնությա-
նշանաբանի տակ, չափադանց մեծ ակտիվությամբ, դա-
տապարտում են աջ թեքման իդեոլոգիների տեսակե-
տները: Յերկրում տեղի ունեցող լարված դասակարգա-
յին պայքարում աջ ուղղիցիայի տեսակետները (կու-
լակի՝ սոցիալիզմի մեջ ներաճման, «քաղաքական կը-
տակում» մեկնաբանած Բուխարինի կոոպերատիվ ուղ-
յանի թեորիան և լենինյան տեսակետին հիմնովին հա-
կառակ հակալենինյան ուսուցումը, թե կոլտնտեսու-
թյունները յայն ճանապարհ չեն դեպի սոցիալիզմ,
կուլակի դեմ ձեռք առած «արտակարգ միջոցների»
ծիտումը) դառնում են բացահայտ և ուղղակի գենդ-
կուսակցության և բանվոր դասակարգի դեմ դասա-
կարգայնորեն թշնամի ուժերի ձեռքում:

Այլ թեքման իդեոլոգիների այդ դրվածքները գործ-
նականում հասցնում են կուլակի դեմ մղած պայքարից
հրաժարվելուն, գյուղական չքավորության կաղմա-
կերպման թերադեհատություն, յերկրի ինդուստրալի-
զման և գյուղատնտեսության կոլեկտիվացման նկատ-
մամբ կուսակցության վարած դժի դեմ պայքարելուն,
կուսակցության հացամթերման քաղաքականության
դեմ պայքարին: Հնգամյակի առաջին տարվա ար-
դյունքները ցույց տվեցին, վոր աջերի «մարդարեյու-
թյունները» Կենտկոմի դժի կորստաբերության, ին-
դուստրալիզման նշած թափի անիրագործելիության,
գյուղատնտեսության դեգրադացիայի մասին, կատա-
րյալ պարտություն կրեցին: Կուսակցությունը հենվե-
լով բանվոր դասակարգի ու չքավոր-միջակ մասսայի

լայն խավերի մեծազույն ակտիվութեան և եներգիայի վրա, սոցիալիստական մրցակցութեան ծափաբան, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման հիման վրա փոշ միայն հաղթահարեց նշված պլանը, այլ և ապահովեց բոլոր անհրաժեշտ պայմանները՝ ուժեղացնելու համար յերկրի ինդուստրացման և կոլեկտիվացման թափը: Բայց չնայած իրենց քաղաքական անանկութեան, աջ Ֆրակցիոներները շարունակում են պայքարը կուսակցութեան դեմ, աջ թեքման իդեոլոգները փաստորեն կազմակերպում են պայքար ներսից խախտելու կուսակցութեան դիմը, վորը կեղծավորաբար նրանք «պաշտպանում են» խոսքով:

Կուսակցութեանը պահանջում և աջերից անմիջապէս, ամենամիտական ձևով, առանց յերբայելու, հրաժարվել իրենց ուղղորտունիստական տեսակետներից և լիովին և անվերապահորեն իդեալեա գինաթափվել:

Կուսակցութեանն այլևս չի հանդուրժի յերկերեսանութեան, փասած դիվանագիտութեան, վոր ձգտում են ստեղծել մեր կուսակցութեան մեջ սոցիալ-դեմոկրատական ուղղորտունիզմի վառթարագույն սովորները:

Կուսակցութեանը չի հանդուրժի նվազագույն վորձըն անդամ թուլացնելու լենինյան շարքերի յերկաթե կարգապահութեանն ու իդեոլոգիական միասնութեանը: Միայն յերկու ճակատով՝ թե՛ աջերի և թե՛ «ձախերի» դեմ մղած վճռական պայքարը կապահովի կուսակցութեան պրոլետարական մարտունակութեանը և մասսաների լայն մորիլիդացիան կուսակցութեան գրլխավոր դժի շուրջը՝ Դիվիզիայի կուսակցական կազմակերպութեաններն կոնֆերանսում ունեցած իրենց ներկայացուցիչների միջոցով խոսք են տալիս հաստա-

տուն ձևով, անշեղորեն, չնայած վորեն դժվարութեան, կիրառել կուսակցութեան դիրեկտիվները և ավելի բարձրացնել իրենց պատրաստութեանը, իրենց մարտունակութեանը՝ պաշտպանելու համար պրոլետարական հայրենիքն իմպերիալիստների հարձակումներից:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանի սահմաններում գործող Կարմիր Բանակի վրա դրված էր պատասխանատու խնդիր:

Կարմիր Բանակը պետք է կռիվ մղեր թշնամու դեմ, ունենալով լեռնային շղթաներով պատած ռազմական գործողությունների թատերաբեմ: Մի կողմից չափազանց սահմանափակ էր հաղորդակցության համար հարմար ճանապարհները, իսկ մյուս կողմից հրեշտակաբան չէր ոգտագործել յեղած ճանապարհները (յերկաթուղին գտնվում էր թյուրքերի ձեռքում, իսկ խճուղին ծածկված էր խոր ձնի տակ): Կարմիր Բանակը գործում էր դաժան ձմրան ու յերկրի տնտեսական ծայր աստիճան քայքայման պայմաններում:

Յերևանի ու Քանաքեռի պաշարված կայապարտների գործողությունները, 1-ին գնդի 4 որվա կռիվը Յերևանի տակ, կոմունիստական փառահեղ ջոկատի 4 ժամյա համառ կռիվը, յերբ չըջապատվել էին 10 անգամ ուժեղ հակառակորդով, Յերևանի պաշարված դամարտակի գործողությունները, նրա առանձին դասակների 4 ժամյա կռիվը Կենտկոմի ու Ֆինսոցկոմատի շենքերի մոտ, 178-րդ գնդի փառահեղ գերհերքը Յերևանի փողոցներում, Բեյուք-Վեդի-Շիրազյու պաշարված կայապարտի 44 որ չըջապատվին մեջ մտալը, դաշնակների վրա սարսափ տարածող, պարտություն հտեսած 3-րդ հրաձիգ գնդի փառահեղ հաղթանակները, հայկական հարձիգ բրիգադի 4-ժամյա մարտը

Դարապաշտ—Ձանդեգուրի ճակատում, Վեդիքասարի «Կարմիր Տարր»-ի և 2-րդ հայկական հրաձիգ գնդի սպրիլի 13-ից մինչև 19-ը տեղի մարտերը, նույնի և հունիսի 22-ից մինչև հուլիսի 13-ը, 4-րդ գնդի գործողությունները, 1-ին հայկական հեծյալ և 180-րդ գնդերի ու 1-ին Կովկասյան փառահեղ գործառնի գործառների, ալթմյան 3-րդ պանծալի Կովկասյան հրաձիգ դիվիզիայի, 18-րդ հրաձիգ, 18-րդ հեծյալ դիվիզիաների գործառների փառահեղ հաղթանակները, վորոնք անտեսելի ծանր պայմաններում Յեթնովկայի և Սպիտակի ճակատներից առաջ էին նետվում ռդնություն հասնելու թշնամու ողակով չըջապատված հայկական Կարմիր Բանակին և աղատելու Հայաստանի աշխատավորությունը, —մեր պատմության այս փայլուն եջերը վկայում են, թե վորքան շատ էր վոդեությունություն ու անձնուրացությունը հեղափոխական գործերում:

Ընդհակառակը՝ 2-րդ հրաձիգ բրիգադի ջախջախումը Եջիածնի չըջանում, Յերևանի տակ ընկ. Ապոստոլովի կոմունիստական ջոկատի վոչնչացումը, 5-րդ հայկական գնդի գործառների և 6-րդ գնդի 1 գումարտակի ջախջախումը, 1-ին հայկական հրաձիգ գընդի վոչնչացումը Բեչիքքենդի տակ 1921 թվի հունիսամսին, և նման այլ որինակներ, վոր չի կարելի արդարացնել միայն լեռնային պարագային հատուկ «պատահականություն» տարրով, ցույց են տալիս, վոր գործերը վարժ չէին և պետկազմը պատրաստված չէր դեկավարելու իրեն վստահած գործառները լեռնային պատերազմի պայմաններում:

Սակայն Կարմիր Բանակը, վոր գտնվում էր իր հա-

մար անսովոր, չափազանց բարդ պարագայում, կրելով մարտական ծառայությունից հետո, զորականները, իր սեփական սխալներով և անհաջողություններով յուրացնելով լեռներում մարտ մղելու ձևերն ու սովորքները, լիովին կատարեց իր չափազանց պատասխանատու խնդիրը: Բայց ի՞նչ գնով: Ամենամեծ զոհարարությունների գնով: Մինչդեռ ռազմական արվեստը, ինչպես և ամեն մի այլ արվեստ, սովորեցնում է գրական արդյունքների հասնել նվազագույն ջանքերով կամ «սակավ արշալ» գնով: Առանց վոգելերության և անձնուրացության չկա կռիվ. չկա հաղթանակ: Անձնուրացությունն ու հերոսությունը կհարկավորվի և հետագայում: Բայց զորամասերին պետք է նաև տալ ժամանակակից տեխնիկա և մարտի ժամանակակից պայմաններում մարտ մղելու պատրաստություն: Խանդավառությունը պետք է հենվի պետերի ու կարմիր բանակային կազմի մարտական պատրաստության վրա, մարտ մղելու հմտության վրա: Այն ժամանակ մենք կկարողանանք հաղթանակել «սակավ արշալ» գնով:

Ամբողջ աշխարհի կապիտալիստները տենդորեն պատրաստվում են նոր սպանդի, իմպերիալիստական նոր պատերազմի ընդդեմ Խորհրդային Միության, աշխարհի միակ պրոլետարական պետության, վոր սոցիալիզմ է կառուցում:

Մենք պետք է առանձնապես ուշադիր լինենք դեպի կարմիր բանակի փառահեղ հաղթանակների պատմությունը, վորովհետև դալիք զինված ընդհարումների տեսակետից 1918-21 թ. թ. քաղաքացիական կռիվների փորձը բացառիկ նշանակություն ունի թե մեր ամբողջ Մեծ Միության համար և թե մասնավորապես մեր

Խորհրդային Հայաստանի համար: Այդ կռիվները մերկացրին բանվորների ու զուգահեռների դասակարգային պատերազմի մեթոդներն ընդդեմ կապիտալիզմի: Ներանք վորոշեցին այն բոլոր պայմաններին հանրազամարը, վոր անհրաժեշտ է պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև մղած քաղաքացիական պատերազմում հաղթանակն ապահովելու համար: Քաղաքացիական պատերազմի փորձի ուսումնասիրության անհրաժեշտությունն այժմ ավելի սուր է քան յերբեք: Միջազգային պարագան կրկին ու կրկին ազդարարում է նոր իմպերիալիստական պատերազմի անխուսափելիությունն՝ ընդդեմ սոցիալիզմ կառուցող յերկրի: Բացի դրանից մենք դիտենք, վոր ինչ լուրջագույն էլ համաշխարհային բուրժուազիան հարձակվելիս լինի Խորհրդային Միության վրա, այդ հարձակման հետևանքով առաջացած պատերազմը կլինի հեղափոխական դասակարգային պատերազմ, և վորպես այդպիսին նա շատ բանում կենի հեղափոխական դասակարգային առաջին պատերազմի, — այսինքն քաղաքացիական պատերազմի փորձից:

Քաղաքացիական պատերազմի փորձի ուսումնասիրության անհրաժեշտությունը բոլորում է նաև նրանից, վոր թե՛ հենց կարմիր բանակում և թե՛ նրանից դուրս աճում է նոր սերունդը, վորը չի անցել պատերազմի դաժան դպրոցը, և չունի նրա մարտական պրակտիկ փորձը: Այդ կազմերի համար քաղաքացիական պատերազմի ուսումնասիրությունը պետք է լրացնի նրանց մարտական փորձի բացակայությունը: Քաղաքացիական պատերազմի փորձով, կարմիր բանակի փառահեղ արագիցիաներով ու հերոսական քաջագործություններով

րի պատմութեամբ պետք է դատարարակէն մեր նորեկ մարտիկները, մեր աճող սերունդը, մեր կոմսոմոլը: Կարմիր Բանակի պատմութիւնը և նրա անցած փառահեղ ուղին պետք է ուսումնասիրվեն ու պետք է դառնան մեր Միութեան բանվորների և աշխատավորների սեփականութիւնը:


Հայկական Հրաձիգ Դիվիզիան, մեր Մեծ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի անբաժան մասնիկը. պետք է դատարարակի իր մարտիկներին, կոմիւնիստականներին ու քաղաշխատավորներին Կարմիր Բանակի և մասնավորապէս նրա փառահեղ հաղթանակների տրագիգիաներով ու հերոսական քաջագործութիւններով: Մեր Դիվիզիան, մեր կոմսոմոլը, մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները պետք է ուսումնասիրեն Հայաստանի՝ 1921 թվի քաղաքացիական պատերազմի փորձը նաև այն պատճառով, վոր Կարմիր Բանակը ստիպված էր դործել, հաղթահարելով լեռնային պատերազմի դժվարութիւնները, իսկ նման պատերազմներ կարող են կրկնվել ԽՍՀՄ լայնածավալ տերրիտորիայում, վորտեղ կան լեռնային բազմաթիւ վայրեր:

Համարվի ու Ձանգեզուրի ուղերացիները Հայաստանում վերջին խոշոր ուղերացիներն են ԱԽՅՍՀ սահմաններում տեղի ունեցած քաղաքացիական պատերազմների պատմութեան մեջ: Այդ ուղերացիայով կտրելի յէ դատել Կարմիր Բանակի և մասնավորապէս նրա մասնիկը կազմող Հայկական Կարմիր զորամասերի հասկումները մասին նրանց զարգացման այլ շրջանում:

Դատարարակելով Կարմիր Բանակի փառահեղ

վնդերի որինակով, Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների որինակով, վորոնք իրենց արյունով նոր փայլուն եջեր գրեցին բանվոր դասակարգի՝ իր դիկտատուրայի համար մղած մեծ պայքարի գրքում, հայկական հրաձիգ դիվիզիան համարձակ առաջ ընթանալով Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի հետ, ե՛լ ավելի կուժեղացնի իր յեռանդը, ավելի ևս համառորեն ու համարձակ կշարունակի իր ուսուցումը և այդպիսով կապահովի հաջողութիւնը գալիք անխուսափելի պատերազմում, վորը մեր դեմ պատրաստում են իմպերիալիստական պետութիւնները:





ՀՀ Ազգային գրադարան



NL0225010

40.906

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.